

ԴՐԱՅԻ Ա. ԿԱՐԱԳԵՂՅԱՆ

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՄԵԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎՈՐ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՆ

բարության սուբստանցիա և առաջարկելու համար Հ 6 (34)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1941

~~633.5~~ A 18381
~~4 - 29~~ 947
4 1/2 9-372342.
Енреническое 18381
Лягушка 1934.

26/11/80	4/12	405
11/12/80		1934.

633-51

Դ-29

ԴՊԵՆՏ Ա. ԿԱՐԱԳԵՂՅԵԱՆ

ԲԱՄԲԱԿԵՆՈՒՄ ՄԸՆԿՈՒԹՅԱՆ
ԸԹԱԶԱՎՈՐ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՆ

[ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈԼԵՋԵՆԵՐԻ Ն 6(21)]



947
A 18371

Z U S M E S Z R U S

ԵՐԵՎԱՆ

1941

ДОЦЕНТ С. КАРАГЕЗЯН
Передовая агротехника культуры хлопчатника
(на армянском языке)
Армгиз, Ереван, 1941

ԱՌԱՋԱԲԱՆ

Սոցիալիստական քյուղատնտեսության պայմաններում, Դնչակես բոլոր կուտուրաների, այնպես էլ բամբակինու մշակության ագրոտեխնիկան հսկայական չափերով դարձացավ:

Մինչ Հոկտեմբերյան ռեվոլուցիան, ցարական Ռուսաստանի գաղութ-ներ՝ Միջին Ասիայում և Անդրկովկասում բամբակագործությունը հիմնած էր զյուղացիական մանր տնտեսությունները դաֆճանորեն շահագործելու վրա։ Եյս պայմաններում, ուր ագրոտեխնիկան ծայր աստիճանի հետամնաց էր, բամբակի դաշտերի մշակությունը կատարվում էր գերազանցապես ձեռքի աշխատանքով։

Բամբակագործական շրջանների դարավոր հետամնացությունը լիովին վերացվեց միայն Հոկտեմբերյան Մեծ ռեվոլուցիայից հետո:

Քյուղատնտեսության կողմանվացումով ստեղծվեցին լայն հնարավորություններ բամբակագործական շրջանները կատարելագործված արտադրական միջոցներով զինելու համար։ Բամբակագործական շրջանների կութառողները զինվեցին սոցիալիստական դաշտերի բերքատվությունն առավելացույն շափերի հասցնելու անհրաժեշտ բոլոր հնարավորություններով։

Այս բոլորը բամբակի դաշտերի մշակության ձեռքի մեջ խորը փոփոխություններ առաջացրին. դեռ շպրտվեց չութը և նրա հետ կապված մշակության հետամնաց ձեռքը, Այժմ մեր երկրում բամբակի մշակության աշխատանքները տարիում են գերազանցապես տրակտորներով և ամենակատարելագործված գործիքներով։

Բազմաթիվ ստախանովականներ, կոլխոզների լայն հնարավորությունները լիովին օգտագործելու և ազգութեանարկումների ամբողջ կոմպլեքսը կիրառելու միջոցով տվեցին չտեսնված մեծ արդյունք։

1935 թվին տասնյակ բոիդադաներ և օդակներ ռեկորդային բերք ստացան. Ուղբեկական ՍՍՌ-ում, Ընկ. Ստալինի անվան կոլխոզի օգակագար Ֆայզուլլա Յունուսովը առաջին անգամ հեկտարից ստացավ 57 ցենտներ բամբակ, Այդ նույն թվին լավագույն բամբակագործների հանդիպումը Կրեմլում պարագայի և կառավարության զեկավարների հետ, բամբակագործների մեջ առաջ բերեց հսկայական ոգկորսություն և մեծ չափով նպաստեց բամբակագործության հետագա զարգացմանը

1936 թվին «Հարյուրցենտներականների» շարժման կնյցիատոր բրիգադավար հրահիմ Ռահմատովը հեկտարից ստացավ 111 ցենտներ բներք:

1937 թ. Ուզբեկստանի Ընկր. Ստալինի անվ. կոլխոզի օղակավար Մաղրիամ Բարասախիմովը հեկտարից ստացավ 147 ց. Աղբբեջանի ընկ. Կորոշելովի անվան կոլխոզի օղակավար Բասարի Բագիրովան՝ 142,0 ցենտ. և այլն Այդ նույն թվերին բաղմաթիվ կոլխոզնիկներ հեկտարից տվեցին 50—100 ցենտներ բամբակ:

Այժմ ուկորդային բերք ստանում են ոչ միայն օղակները կամ բրիգադաները, այլ և շատ կոլխոզներ, շրջաններ և ռեսուրսիկաներ:

1940 թվին Արտաշատի կոլխոզը հեկտարից ստացավ 30 ցենտներ բամբակ. Թոփանշալուկի կոլխոզը՝ 33 ցենտ.: Արտաշատի կոլխոզի օղակավար Արտաշես Սահմանյանը հեկտարից ստացավ 54 ցենտ. բամբակ. Թոփանշալուկի բրիգադիր թ. Բաղդասարյանը՝ 38 ցենտներ:

Լենինի շքանշանակիր «Անաստված» կոլխոզի բամբակի բերքատվությունը վերջին տարիներում հետեւյալ աճն ունեցավ:

1934 թվին	7,0 ցենտներ
1936 »	15,5 »
1938 »	23,7 »
1939 »	28,0 »

Այսպէս, բաղմաթիվ կոլխոզներ տարեց-տարի իրենց դաշտերի բերքատվությունը հեկայական չափով բարձրացնում են:

Առաջիկայում սոցիալիստական դաշտերի բամբակի բերքն էլ ավելի պեսար է բարձրանալ: Համաձայն ՍՍՌՄ Ժողկոմսովետի և Համ. կ(բ)Պ կենտկոմի սեպտեմբերի 7-ի որոշման սովորական հայստանի բամբակի միջին բերքատվությունը տառաջիկա 4 տարվա ընթացքում ակտոր է համար 24 ցենտների:

Այս պատվավոր խնդիրը մեր կոլխոզները հաջողությամբ կարող են լուծել, լայնորեն կիրառելով բամբակենու մշակության տառաջավոր աղբոտեխնիկան:

Բամբակի դաշտերի բերքատվության վերելքն այժմ էլ ավելի մեծ թափ է ստանալու շնորհիվ ՍՍՌՄ Ժողկոմսովետի և ՀԱՄԿ(բ)Պ արտիստիկ կենտկոմի 1941 թվի մարտի 13-ի որոշման, որի համաձայն սկսած 1941 թից բարեգազաների և օղակների կոլխոզնիկները սահմանված պլանից ավելի ստացած բերքի համար ստանալու են լրացուցիչ վարձատրություն:

Որոշման մեջ բամբակի մասին ասված է հետեւյալը՝ «Օղակին ամբացված ցանքի տարածության վեա բերքատվության պլանից ավելի սպացված բամբակի յուրաքանչյուր ցենտների համար այդ կոլխոզնիկները ստանում են փազով լրացուցիչ վարձատրություն՝ կոլխոզում բամբակի մեկ ցենտների հումքի միջն արժեքի (մթերակայանի վճարը) 50 տոկոսի չափով, ներառյալ հիմնական վարձատրությունը և կոլխոզի ստացած պարզեվ-հավելումները»:

Այս որոշումը բերքատվության բարձրացման և կոլխոզնիկների ունե-

վոր կյանքի ռայմաններն է՛լ ավելի լավացնելու մի հզոր գրավական է հանդիսանում:

Այժմ լավ աշխատող և բարձր բերք ստացող կովսողներն ավելի մեծ վարձատրություն պետք է ստանա, իսկ վաս աշխատող և պակաս բերք ստացողը՝ քիչ:

Առաջավորների փորձը ցույց տվեց, «ո յուրաքանչյուր կոլիսող, բըի գալա և օղակ հեշտությամբ կարող է բարձր բերք ստանալ» Միայն անհրաժեշտ է աշխատանքները ճիշտ կազմակերպել և ժամանակին ու լրիվ կիրառել առաջավոր գիտության և ստախանովական բամբակագործների նվաճումները:

Այս գրքույկի նպատակն է մեր բամբակագործ կովսողներին ծանոթացնել բամբակի մշակության առաջավոր ագրոտեխնիկայի հետ և ցույց տալ այն միջոցառումները, որոնց կիրառումով կարելի է ստանալ բարձր բերք:

ՀԵՂԻՆԱԿ

ԲԱՄԲԱԿԻ ԴԱՇՏԵՐԻ ՆԱԽԱՑԱՆՔԱՑԻՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բամբակի դաշտերի մշակության աշխատանքներն սկսվում են աշնանից:

Բոլոր առաջավոր կոլխոզները շատ մեծ ուշադրություն են դարձնում հողի աշխանային մշակության, հատկապես աշխանավորի վրա:

Այսպես օրինակ, Լենինի շքանշանակիր «Անաստված» կոլխոզը՝ 1936 թվին ընդամենը ուներ 95 հեկտար աշխանավոր (ցրտահերկ), 1937 թվին՝ 125 հեկտար, 1938 թվին՝ 150 հեկտար, իսկ 1939 թվին՝ 213 հեկտար:

Բամբակենում գաշտերի բերքատվությունը բարձրացնելու գործում աշխանավարը շատ մեծ և վճռական նշանակություն ունի. Այս է պատճառը, որ բազմաթիվ առաջավոր կոլխոզներ տարեց-տարի ավելացնում են իրենց աշխանավար տարածությունները:

Աշխանից խորը վարած հողերում շատ հաջող կուտակվում է պահպանվում են մթնոլորտային անդումներից գոյացած ջրերը, մալախոստերի ոչնչացման խնդիրը լուծվում է ճիշա կերպով, լավանում են հողի ֆիզիկո-քիմիական և բիոլոգիական հատկությունները, վարի ժամանակ առաջացած կոշտերը խոնավության և սրտի ազդեցության տակ փշրկում ու վերածվում են կնձիների Աշխանավարի միջնցով պայքար է տարվում մասամբուների ու հիմանդրությունների գնմի:

Այս բոլորի շնորհիվ աշխանից վարված հավերում գարնան աշխատանքները շատ ավելի հեշտ և բարձր որակով են կատարվում, ուստի և այդ գաշտերի բերքատվությունն ավելի բարձր է

մինում, քան այն դաշտերի, որոնց մշակությունն սկսում են գարնանից: Սակայն, զեռ ևս շատ կոլխոզներ իրենց դաշտերի մեծ մասի հիմնական վարը հետաձգում են գարնանը: Դարնան վարը երբեք չի կարող լրիվ ապահովել բույսերի զարգացման համար անհրաժեշտ բարոր գործոնները: Նա հողում չի ստեղծում էնձիկային, փուլոր վիճակը, վարն ստացվում է կոշտու և մոլախոտերը լրիվ չեն ոչնչացվում:

Վերջապես, հողի հիմնական մշակությունը գարնանից սկսելն ունի նաև այն բացասական կողմը, որ կոլխոզներում ստեղծվում է բանվորական ձեռքերի և քարշող ուժի խիստ լարված վիճակը, որն անդրագառնում է աշխատանքների որակի վրա: Ի խախտված ազրուենարկումների կիրառման ժամկետները:

Այսպիսով, բարեակի դաշտերից բարձր բերք ստանալու կանխարգույն պայմաններից մեկը սանդիշանում է այն, որ հիմնական վարը պետք է աշնանը կատարի:

Յանքաշը ջանառության մեջ բամբակենու նախորդներ հանդիսանացած են առվույտը, բամբակենին, մասսամբ խորվենին, գարնանացան գարին և մի շարք խողանացան կուլտուրաներ: (Հանքարի ճակնդեղ, կաթուֆիլ և այլն): Բացի դրանից, բանքաշը ջանառություն չկիրառող դեռ ևս շատ կոլխոզներում աշնանացան ցորենը նույնպես հանդիսանում է բամբակենու նախորդ: Առաջ, հիմնականում այս կուլտուրաներից ազատված դաշտերն են, որոնք բամբակենու ցանքերի համար աշնանից պետք է մշակվին:

Բամբակենու համար նախորդ հանդիսացող հիշյալ կուլտուրաները դաշտերը հիմնականում ազատում են հաջորդաբար: Նաև հացահատիկները, ապա առվույտը և հետո բամբակն ու մյուս կուլտուրաները, հետեւսպես աշնանավարն են պիտի կատարել: Նույն հաջորդականությամբ, որպեսզի լարված վիճակ չնունդվի և կոլխոզի բոլոր հողերը աշնանը ժամանակին վարվեն:

Աշնանավարը պետք է սկսել հացահատիկներից տղատված դաշտերից: Այս դաշտերում հացահատիկները հնձելուց անմիշապես հետո անհրաժեշտ է նաև խոզանի երնավար կատարել և ապա աշնանը խորը վարել:

Խոզանավարը մի շարք առավելություններ ունի: Նախ հրա միջոցով դաշտի մակերեսը բերքահավաքից անմիշապես

հետո վիխրեցվում է, որի շնորհիվ հազի վարելաշերտն ուժեղ չը չորանում և աշնանավարն ավելի հաջող է՝ կատարվում, բացի այդ, խոշոր կոշտեր չե ստացվում, երկրորդ՝ հետագա խոր վարե միջոցով հինգմասում են գաշտում, դարձացող մոլախոտերը:

Հացանատիկներից աղատված գաշտերի աշնանավարը պետք է ավարտել մինչև նոյյեմբերի սկզբները, որտեղի դրանից հետո սկզի մյուս դաշտերի վարը:

Առվույտատեղերը պետք է սկսել վարել հոկտեմբերի վերջերին և ավարտել նոյյեմբերի կեսին (մինչև բամբակից աղատված դաշտերի վարն սկսելը):

Բամբակից տղատված դաշտերի աշնանավարը, հաճախ բերքահամարն ուշ ավարտելու պատճառով, կազմակերպական որոշ գմբարությունների է հանդիպում և վարը ժամանակին չի կատարվում։ Սակայն առաջակար բամբակագործ կոլլուգնիկների փորձերը ցույց են տալիս, որ աշխատանքները հիշա կազմակերպելու դեպքում այդ գմբարությունները հեշտությամբ կարելի է վերացնել և աշնանավարը ժամանակին կատարել։

Բամբակի դաշտերը ժամանակին աղատելու համար ցրտակարսթյունից հետո խակ մնացած, չբացված կնգուղները պետք է առանձին հավաքել և դրանից անմիջապես հետո դաշտը մաքրել բամբակի ցողուններից (գուզափայախց):

Ծրտահարություններից հետո խակ մնացած կնգուղները հաճախ չեն հավաքում, կարծելով թե այդ կնգուղները կարող են նորմալ ընթացքով բացվել։ Այնինչ ցրտահարություններից հետո բամբակենու զարգացումը կանգ է առնում, և միայն առաջին տասնօրյակում որոշ կնգուղներ կարող են բացվել, որոնք մինչև ցրտահարությունը, հիմնականում, հասունացած են եղել, իսկ մնացած խակ կնգուղները երբեք էլ չեն հարող քիչ թե շատ նորմալ բացվել։ ուստի բամբակենու վեգետացիան կանգնեցնող ցրտահարություններից մոտ 10—15 օր հետո դաշտերից անպայման պետք է հավաքել խակ կնգուղներն ու ցաղաններն այն հաշվով, որ այդ դաշտերում աշնանավարն սկսվի նոյյեմբերի կեսներին և ավարավի մինչև դեկտեմբերի սկիզբը։

Բամբակին տրամադրվող դաշտերում աշնանը մեկ հիմնական վար պիտի կատարել Վերջերս որոշ կոլլուգներ աշնանը երկու հիմնական վար են կատարում, բայց ինչպես փորձերից

պարզվում է, աշնան կրկնակի վարը ավելարդ է։ Փաստորեն աշնան երկրորդ վարի միջնորդ աշխատում են ոռութիւն վարի թերությունները վերացնել Սակայն, ինչպես փոքրերն են ցույց տալիս, ժամանակին խորը և որակով կատարվող մեկ վարը շատ ավելի մեծ արդյունք է տալիս, քան երկու անժամտնակ վարը։

Աշնան հիմնական վարը պետք է անարտյան խորը կատառ- բեր Դիտանետաղուտական հիմնարկների և սաախանովական բամ- բակագործների փորձերը ցույց են տալիս, որ խոր վարը մեծ- գեր է խաղում բամբակի բերքը բարձրացնելու գործում։

Խոր վարը մեծացնում է վարելաշերտի հպորությունը, հա- ջողությամբ ոչնչացնում է մոլախոտերը, լավացնում է հողի ջրաթափանցիկությունը, օդափոխանակությունը, աննուային ռե- ժիմը և բամբակենու արմատային սիստեմի զարգացման համար։ ստեղծում է առավել լավագույն պայմաններ։

Միութենական բամբակագործական գիտակենուազուտական ինսախուուի փորձերի համաձայն, վարի խորությունը՝ 20-ից՝ 30 սմ. հասցնելու դեպքում հեկտարի բերքը՝ 34,9 ցենտներից բարձրացել է 45,0 ցենտների։ Կամ թուրքմենական բամբակա- գործական կայանի 1936 թվի դրամ փորձերում՝ 20 սմ. խորու- թյամբ վարի դեպքում ստացվել է 37,1 ց. բերք, 25 սմ. դեպ- քում՝ 38,5 ցենտներ, իսկ 30 սմ. դեպքում՝ 42,8 ց։ Այսպիս- բազմաթիվ որինակներ կարելի է բերել որոնց բոլորն էլ առա- ցուցում են խոր վարի առավելությունները։

1941 թվի բամբակի ազգրոկանուների համաձայն, Հայաս- տանում հիմնական վարը պետք է կատարվի՝ 25—30 սմ. խորու- թյամբ։ Համեմատաբար պակաս խորությամբ պետք է վարել միայն այն հողերը, որոնց վարելաշերտը խորը չէ։ Նման հո- ղերի վարելաշերտը պետք է խորացնել աստիճանաբար այն հաշվով, որ յուրաքանչյաւը վարի ժամանակ վարելաշերտը խո- րացվի 2—3 սանտիմետրից ոչ ավելի։ Ընդ որում վարի հետազո- խորացումը անհրաժեշտ է կատարել առանց առը շառա տալու։ Հողը խորացնող գութաններով կամ չիղելներով։

Աշնանավարն անպայման բոլոր դեպքերում պետք է կա- տարել նպասգութանիկավոր գութաններով։ Այս գութանների առավելությունն այն է, որ վարի ժամանակ նորիագութանիկը՝ 10—12 սմ. խորությամբ հողի վերին փոշիացած շերտը դցում

է ակուիտակը, իսկ գութանի հիմնական կորպուսի միջոցով այդ շերտի վրա շուրջ է արվում 15—18 ոմ. հաստությամբ հողի ներքին շերտը Այդ միջոցով հողի վերին, որորված, փոշիացած մասն ընկնում է խորը, իսկ խորքի լավորակ հողը բարձրանում է վերև Յանձնի փուխր, հնձիկային հողը տեղափոխվելով վերև, բույսերի զարգացման համար ստեղծվում է լավագույն պայմաններ, իսկ վերևի փոշիացած շերտն ընկնելով խորը, մինչև մյուս պարի ստանում է կնձիկային հատկություն Բացի այս, հողի վերին շերտում կուտակված վասառաների թրթուրները, հարսնյակները և ձվիկները հողի խոր շերտերի աակն է արվում և նրանց մեծ մասը գուրս գալ չկարողանալով, ոչնչանում է:

Նախագույթանիկավոր դութաններով կատարվում է չափազանց բարձրորակ, կուլտուրական վար, որից հետո հետագա աշխատանքներն են կատարվում են հեշտ և բարձր որակով։ Այս մասին սովորական ականավոր գիտնական վ. Ռ. Վիլյամոն ասում է՝ «Նախագույթանիկ ունեցող դութանով կուլտուրական վար կիրառեն, առանց չափազանցության, ներկայացնում է սովորական անվոլուցիրն ապրնումիայի ամենակարևոր ինդիքը, որովհետև անխոտիր ամեն կարգի ապրոնումիական բոլոր միջոցառութների էֆեկտը կորչում է հողի անստրուկտուր լինելու հետևանքով»։

Աշխատավարի ժամանակ պետք է հավաքել դանդուրքանի, չայիրի և այլ մոլախոտերի կոնգրաբմատներու ու այրել Դաշտի եղբները, որոնք արակտորային դութաններով չեն վարվել, վարչից անմիջապես հետո անհրաժեշտ է ձիու դութաններով վարել։ Այս աշխատանքի վրա մեզ մոտ սովորաբար անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում, չատ գեպքերում դաշտի եղբները թողնում են անմշակ, որի հետևանքով դգալի չափով հողային տարածություններ մեռում են անօգտադորձնելի, և մոլախոտերի քուն են դառնում։ Առանց չափազանցության կարելի է ասել որ շատ կոլխոզներում այդպիսի արածությունների ընդհանուր գումարը մի քանի հեկտարի է համառում, որոնք մշակելով կարելի է զգալի չափով ավելի բերք ստանալ և միաժամանակ մոլախոտերի տարածման նպաստավոր պայմանները վերացնելի

Դաշտան նախացանքային մշակության միջոցով աշխանից վարված հողերներ սանցի համար ստեղծվում են անհրաժեշտ

պայմանները. ոչնչացվում են մոլախոտերը, պահպանվում է հոգում կուտակված խռնազությունը և սերմների ծլման համար ստեղծվում է լովագույն միջավայր:

Աշնանից վարդած բոլոր հոգերը նախ վազ գարնանը, հողի հասունացման ժամանակ, պետք է անպայման փոցինելի Այս աշխատանքը մեր բամբակագործական շրջաններում հաճախ թերապնահատվում է, մինչդեռ վազ գարնանը (հողի քեցին) աշնանավարերը փոցինելու միջոցով հողի ալիքավոր մակերեսը հարթեցվում, կոշտերը մանրացվում, մոլախոտերի ծիլերը ոչնչացվում և խոնավության գուրսիացումը կասեցվում է, ինչպես նաև հետագա աշխատանքները հեշտ և որակով են կատարվում:

Եթե աշնանավարը կատարված է նախապութանիկավոր գործաններով և բարձր որակով, ապա կնձիկային ստրուկտուրա ունեցող և կոշտերից զուրկ հոգերում, գտրնան փոցիսամը կարելի է փոխարինել քարշակումով: Քարշակի առավելությունն այն է, որ նա հողն ուժեղ չի խառնում և չի փոշիացնում, այլ վարած հողի վրա առաջացած կատարներից հողը զերցնում և լցնում է ակաների մեջ ու դրամակ հողամասի մակերեսը թեթև փխրացնում և հարթեցնում է:

Վերջին մի քանի աարիների ընթացքում բամբակի դաշտերը գարնանը վարում են մի քանի անգամ, Բամբակագործական շրջաններում բազմավարն անհրաժեշտ էր գաշտերն անկուլտուրական վիճակից հանելու, մոլախոտերից ազատելու, ամբազնդված, կոշտուս հողերը փխրացնելու, հողի վարելաշերտը խորացնելու և ենթավարելաշերտը փխրեցնելու համար:

Ցանքաշրջանառության բացակայության և նախկինում անորակ մշակված, մոլախոտերով խիստ վարակված հողերը բարելավելու և բերքատվությունը բարձրացնելու համար բազմավարը կարենոր, սակայն ժամանակավոր մի միջոց է:

Ցանքաշրջանառություն կիրառելու, խորացնությունը ծագալելու և հողի կուլտուրական վիճակը լավացնելու հետ միասին անս եղանակն ասախնանաբար ավելորդ է գառնում: Այնուամենա կուլտուրական հոգերում բաղմավարը նորաստում է հողի փշացման և միանգամայն ավելորդ ծախսերի պատճառ է դառնում:

Բազմավարի պատճառով կոլխոզները հաճախ ստիպված են մինում վարել չառապնացած, քեշի չնկած հողերը: Այդպիսի

անժամանակ վարից դաշտում անխուսափելիորեն ստացվում են մեծ կողաքր, որոնց փշերն ու մանրացները շատ դժվար է լինում՝ և հսկայական աշխատանք պահանջում: Շատ գեղքերում կոլխոզնիկներն ստիպված են լինում ձեռքի գործիքներով հողի կոշտերը փշը լուս: Հասկանալի է, որ նման դեպքերում հողի փիղիկական հատկությունները խիստ վատանում են, և այդպիսի դաշտերում ցանքն անորակ է կատարվում:

Վերջին տարիներում Միջին Ասիայի փորձակայանների հետազոտական աշխատանքների արդյունքները և կոլխոզային փորձերը ցույց են տալիս, որ աշնանից բարձր որակով և խորը վարված հողերում մեկ անգամ կրկնավար կատարելիս ավելի բարձր բերք է ստացվում, քան 2 կրկնավարի գեղքում (տեսագ. № 1)

Վարի քանակի ազդեցությունը բամբակի բերքի վրա*

Աղ. № 1.

Քարտ ՏՄՀ	Քարի դեպա- րամ (մեկը հիմնական, մյուսը կը բե- նալաբ)	Բամ. բերքը (հեկտ. ցենում)		
		2 վարի դեպա- րամ (մեկը հիմնական, մյուսը կը բե- նալաբ)	3 վարի դեպա- րամ (մեկը հիմնական, երկուսը կը կազմական)	
ՓՈՐՁԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԱՅՐԻ				
Սովորով № 8 (հենակետ)	1939	66,6	64,2	
Կիրովի անվ. կոլխոզ, Լենինյան շրջ.	1939	61,2	48,0	
«Կորանի» Օկտյաբրյան կոլխոզ	1939	60,0	59,1	
Սովորով № 8 (հենակետ)	1939	51,1	50,1	
Կոլխոզ «Խոտոփակ», Բաղդատսկի շրջ.	1939	23,4	23,3	
» «Կոլլ-Ցուղ»	1939	55,3	53,7	
Դիմիտրովի անվ. կոլխոզ, Նամանգանի շրջ.	1939	46,0	44,9	
Կազախստանի փորձակայան	1938	22,6	20,7	
Սովորով № 8 (հենակետ)	1938	37,7	35,9	
Եղբասկենտի հենակետ	1938	47,2	49,5	
Պախտա-արալի փորձակայան	1938	39,5	38,1	
Թուրտկուլիի փորձակայան	1938	34,7	31,8	
Կոլխոզ «Կոլլ-Ցուղ», Օրջոնիկիձել շրջ.	1939	30,4	25,8	
Կիրովի անվ. կոլխոզ	1939	47,8	36,1	
«Կոլ-Կոմունա»	1939	35,7	29,2	

Այսպիսով, գիտահետազոտական հիմնարկների և առաջարկությունների փորձերը ցույց են տալիս, որ բազմամյա մո-

* Տվյալները բերվում են Ակ-կավակի գիտ աշխատանքեր Ֆ. Սոկոլովի:
Ն. Շեմչուկի և ուրիշների աշխատությունից:

Հախոտերից հիմնականում մաքրված, վարելաշերտելը խորացված և աշնանը մեկ անգամ ժամանակին ու բարձր որակով վարած հողերում գարնանը մի քանի անգամ կրկնավար կատարելը բուլորպին ավելորդ աշխատանք է:

Հողի նախացանքային մշակությունը շատ հաջող է լինում, եթե այն կատարվում է ակադեմիկ Վիլյամսի առաջարկած սխեմով՝ որի համաձայն աշնանը նախագութանիկավոր գութանակութեան մեջ մեկ բարձրորակ վար է կատարվում և գարնանը հողի մակերեսը թեթևակի փխրեցվում է առանց առը շուռ տալու։ Սակայն այս ձեզ մեր բամբակագործական շրջաններում առաջմ նույնությամբ կիրառել չենք կարող որովհետեւ նախ՝ աշնանավարը չի կատարվում նախագութանիկավոր գութաններով և երկրորդ՝ դեռևս կան հողեր, որոնք վարակված են բազմամյա մոլախոտերով և անկուլտուրական վիճակում են գտնվում, որոնց բարելավելու համար կրկնավարը անհրաժեշտ է։

Բացի այդ, ակադեմիկ Վիլյամսի սխեմմը պետք է լայնութեն փորձարկել բամբակագործական շրջանների յուրահատուկ պայմաններում և այն հարմարեցնել տարբեր տիպի հողերի մը շակության։

Նկատի ունենալով այս բոլորը, առայժմ աշնանից վարված հողերը գարնանը միայն մեկ անգամ պետք է կրկնավարել, իսկ որոշ գեպքերում կրկնավարը կարելի է փոխարինել առը շուռ չտվող գործիքների խոր մշակումով (չիզելներով, կուլտիվատորներով): Այս աշխատանքի ժամանակ տարբեր հողերի նկատմամբ պետք է ունենալ խիստ դիֆերենցիալ մոտեցում, ընդուրում՝ 1. այն հողերը, որոնց աշնանավարը լավ չի կատարված, ամբապնդված են, կոշտեր ունեն կամ մոլախոտերով վարակված են, անհրաժեշտ է կրկնավար կատարել, 2. աշնանը բարձր որակով վարված, փուխր, կոշտեր չունեցող, մոլախոտերից մաքուր հողերում, կրկնավարի փոխարեն, չիզելներով, կուլտիվատորներով կամ թևերը հանած լուշիլնիկներով հողը պետք է լավ և խորը փխրեցնել։

Այս աշխատանքներից անմիջապես հետո կամ միաժամանակ, դաշտերն անպայման պիտի փոցխել և հավաքել բազմամյա մոլախոտերի արմատները։ Տվյալ գեպքում փոցխի միջոցով կոշտերը փշրվում և դաշտը հարթ մակերես է ստանում։ Այս աշ-

խառանքն ուշացնելու գեպում, կոշանը չորանալով խիստ ամրանում են, և հետագայում չափազանց դժվար է լինում նրանց փրկել Այն դաշտերը, որոնք այս կամ այն պատճառով՝ աշխանը չեն վարված, դարնանը պետք է վարել 25—30 սմ. Խորությամբ անմիջապես փոցիներ Այս վարը, եթե դարնանը չուտ է կատարված, ապա հողը ծանր է և ամրացած, ուստի մինչև ցանքը մեկ անգամ անհրաժեշտ է կրկնավար կամ չիպելով մըշակել:

Բարձր բերք պահանալու համար զարնան նախացանքային աշխատանքները բացառիկ մեծ նշանակություն ունեն, ուստի բոլոր միջոցները պետք է գործադրեն, որպեսզի կրկնավարը կամ չիպելումը և մյուս աշխատանքները անողայման ճիշտ ժամանակ կին կատարվին:

Դարնանը հողի մշակության աշխատանքներում պետք է լայն չափերով օգտագործել չիպելները Այս գործիքների արտադրողականությանը գութանների համեմատությամբ ջատ ավելի, բարձր է (մոտ 60—80 տոկոս), Չիպելները հողը փխրեցնում են խորը և առանց առը շուռ տալու, որի շնորհիվ վարելաշերտն ավելի քիչ է չարանում:

Չիպելները չեն կարելի օգտագործել առվույտանեղերում և բաղմամյա մոլախոտեներմիվ վարակիած դաշտերում. այդպիսի հազերում չիպելը վատ է աշխատում և նրա տատաները հավացում ու գուրս են հանում առվույտի արմատները, իսկ մոլախոտեների կոնդարմատները մանրացնում ու տարածում են դաշտում:

ՆԱԽԱՑԱՆՔԱՑԻՆ ԶՈՒՐ (ԱՐԱԹ)

Բամբակի դաշտերը ցանքից առաջ ջրելք կամ, ինչպես ընդունված է ասել, արաթ անելը մի շարք առավելություններ ունի Արաթը կատարվում է աշխանը կամ զարնանը Արաթի միջոցով անհաղատակ հոսող ջրերը կուտակվում են արտերի մեջ, որի հետեւանքով հետազոտում ջրի կարիքն ուժեղ չի դպացվում:

Խնամքով արաթ արված հողերում ծլոջրի կարիքը վերանում է: Արաթը, բացի ջուրը խնայելուց, ունի նաև այս առավելությունը, որ ցանքից հետո հողի երեսը չի կեղեակալում, մարգեր պատրաստելու կարիքը վերանում է, իսկ վեղեացիոն-

ջուրը տրվում է բամբակի միջարքային տարածություններում՝ հանված ակոսներով, որով զաշտային աշխատանքների եռուն ժամանակ բանվորական ձեռքերի խնայողություն է կատարվում: Բացի այդ, նախացանքային ջուրը, հատկապես աշնան արաթը, որոշ չափով նպաստում է դաշտերում, տարածված մոլախոտերը, հիգանդությունները և վասատուները ոչնչացնելուն:

Արաթ պիտի կատարել խոնավունակ հողերում, իսկ թեթև տվաղային, խճային ենթավարելաշերտով հողերում, որոնց իրենց մեջ ջուր չեն պահում, միտք չանչի Արաթ չպետք է կատարել նաև ստորերկրյա ջրերը մոտիկ հողերում:

Պետք է նկատի ունենաւ, որ բամբակացան շրջաններում՝ գարնանը շոգերը շուտ սկսվելու և օդը չոր լինելու հետևանքով զաշտերը շատ շուտ չորանում են, և այդ սրատնառով արաթն, իր նշանակությունը կարող է կորցնել, ևթե այն չի կմտարված ժամանակին և հատուկ խնամքով, ինչպես նաև եթե հետապաշխատանքները ժամանակին չեն կատարվում:

Միջին Ասիայի և Ազգերի շանի առաջավոր բամբակագործուները հատուկ ուշադրություն են դարձնում արաթի ժամկետունի վրա, նրանք լայն չափերով կիրառում են աշնան կամ գարնան արաթ, Այս ժամկետների արաթները, համեմատած ուշ գարնանը կատարվող արաթի հետ, ունեն մի շարք առաջնական գություններ: Ուշ գարնան արաթը, որը սովորաբար արվում է ցանքից մի քանի օր առաջ, ձգձգում է ցանքի ժամկետը, որոշ չափով վատացնում է վարի որակը և առաջադիրում է կազմակերպական որոշ զժվարություններ: Աշնան և վաղ գարնան արաթներն այս բացառական երկույթները չունեն: Ուշ գարնանային արաթ պետք է կատարել բացառիկ դեպքում, այն էլ միայն այնպիսի հողերում, որոնց ջրթափանցկաթյունը մեծ է և շուտ են չորանում, քակ մնացած հողերում պետք է կիրառել աշնանային կամ վաղ գարնանային արաթ: Աշնանային արաթը նպատակահարմար է գեկտեմբեր ամսին, հիմնական վարից հետո:

Արաթը պետք է կատարել հիմնական վարը կատարված փողխված, մակերեսը հարթեցված հողերում: Արաթի ջուրը պիտի առաջ ակոսներով, որոնց մեջ ջուրը հոսելու է այնքան ժամանակ, մինչև որ միջակոռային տարածությունները լավ սկանան: Այն դեպքում, երբ արաթ արվող հաղը աղակալած է, ջուրը պետք է

տալ մարդկերով, որպեսզի վարելաշերտում կուտակված այլելորդ աղերը լվացվեն:

Արաթ արված հողերը, առաջին իսկ հնարավորության գեղքում՝ քեշին, անպայման առանց ուշացներու պետք է փոցինել: Հողամասի հավասարաչափ չչորանալու գեղքում անհրաժեշտ է մաս-մաս փոցին, չթողներով, որ չորացած տեղերն առանց փոցիներու մնան:

Աշնանը կամ վաղ գարնանը արաթ արված հողերը, եթե միամյա մոլախոտերով վարակված են, ցանքից առաջ կուլտիվատորներով կամ չիղեներով պիտի մշակել և անմիջապես փոցին, իսկ բազմամյա մոլախոտերով վարակված հողերն անհրաժեշտ է կրկնավարել՝ 10—12 սմ. խորությամբ: Կրկնավարի հետ միաժամանակ հողամասն անպայման փոցին և մոլախոտերի կոճղարմատները հավաքել: Բնդհանը ապես պետք է աշխատել արաթ արված հողերը քիչ շրջել և խառնել բայց պետք է հետեւ որ այդ հողերի մակերեսը միշտ փուլը լինի և մաղականությունը խախտված, որպեսզի ուժեղ գոլորշիացում տեղի չունենա և սերմերը ծլելու համար անհրաժեշտ խոնավությամբ ապահովված լինին:

ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ

Բամբակի դաշտերում կիրառվող ագրոձեռնարկումների շարքում պարաբացումը շատ կարևոր տեղ է գրավում: Պարաբացումը միջոցով դաշտերը հարստացվում են այն բոլոր մննդանյութերով, առանց որոնց բամբակենին զարգանալ և բերք տալ չի կարող: Հետևաբար, հողի մշակության հետ միասին, անհրաժեշտ է մտածել նաև դաշտերը սննդանյութերով ապահովելու մասին:

Բամբակենին հողից վերցնում է բավականաչափ շատ սննդագանյութեր: Ինչպես ուսումնասիրությունները ցույց են տալիս, 15 ցենտիներ բերքի գեղքում մեկ հեկտարից բամբակի բույսերը վերցնում են մոտ 80—90 կիլոգրամ աղոտ, 30—40 կիլոգրամ ֆոսֆոր և 50—60 կգ. կալիում:

Բամբակենին հողից վերցնում է նաև ուրիշ նյութեր, բայց

այդ նյութերից մեր բամբակացան շրջանների հողերում այնքան կան, որ կարիք չի լինում նրանցով դաշտերը պարարտացնել, իսկ բույսերի համար մատչելի ազոտի, ֆոսֆորի և շատ գեղեցիկ մասերի գանձելը այնքան էլ մեծ չէ, ուստի բարձր բերք ստանալու համար այդ նյութերով դաշտերի պարարտացումն անհրաժեշտ պայման է:

Առաջներում խորհուրդ չեին տալիս բամբակի դաշտերը կալիումով պարագացնել, պատճառաբանելով, թե բամբակի դաշտերում այդ նյութից անհրաժեշտ քանակությամբ կա: Սակայն փորձերը ցույց են տալիս, որ կալիումի կիրառումը մեծ մասամբ օգուտ է տալիս: Կալիումը մեծ արդյունք է տալիս գլխավորապես այն հողերում, որոնք լրիվ ապահովված են աղոտով և ֆոսֆորով:

Սրանից մի քանի տարի առաջ այն կարծիքն էր տարածված, թե բամբակի դաշտերին աղոտ պետք է տալ 60—90 կիլոգրամից ոչ ավելի և մոտ նույնքան էլ ֆոսֆոր: Ստախանովական բամբակագործները պարաբաննյութերը համեմատաբար շատ ավելի մեծ դոզաներով գործածեցին և ստացան շատ բարձր արդյունք:

Հարյուր ցենտներականներ Բաստի Բագիրովան, Իբրահիմ Ռախմատովը և ուրիշները հեկտարին տիմին մոտ 400 կիլոգրամ աղոտ, Ալիմ Կուլբանովը՝ 300 կիլոգրամ աղոտ և համապատասխան քանակությամբ ֆոսֆոր ու կալիում: Հիսուն ցենտներական շատ կոլխոզնիկներ հեկտարին տալիս են մոտ 150—200 կգ. աղոտ և այդքան էլ ֆոսֆոր:

Միութենական բամբակագործական գիտահետազոտական ինստիտուտն ևս մոտավորապես նույնպիսի նորմաներ է առաջարկում, այն է՝ 100 և ավելի ցենտներ բերք ստանալու համար հեկտարին տալ 400 կգ. աղոտ, 400 կգ. ֆոսֆոր և 100 կգ. կալիում: 40—50 ցենտներ բերքի համար՝ 190 կգ. աղոտ, 180 կգ. ֆոսֆոր և 50 կգ. կալիում: Այս նորմաները արվում են որպես օրեինատիր: Դրանք, ենթադրություններից, ենթակա են որոշ փոփոխությունների:

Զափից դուրս շատ պարաբաննյութ տալն ևս ունի իր բացասական կողմը: Պետք է նկատի ունենալ, որ բարձր աղբու

տեխնիկայի կիրառման պայմաններում և պարարտանյութերը
ճիշտ ու ժամանակին օգտագործելով՝ կարելի է պարարտանյութերի
համեմատաբար ցածր դողանելով ստանալ բարձր բերք։ Այժմ
ստանանովական բամբակագործները յուրաքանչյուր մեկ կելոդ-
րամ աղոտի դիմաց ստանում են շատ ավելի մեծ հավելում։ Եթե
առաջ հողին արփող յուրաքանչյուր մեկ կելոդրամ աղոտի դի-
մաց ստանում էին 5—6 կելոդրամ բերքի հավելում, աղոտ այժմ
առաջազրո բամբակագործները նույնքան աղոտի դիմաց ստա-
նում են 15—20 կելոդրամ և ավելի հավելյալ բերք։ Այս նշա-
նակում է, որ բոլոր ագրոձեռնարկութիւնների կոմպելքսը ժամանա-
կին և ճիշտ կիրառելով, պարարտանյութերից կարելի է շատ
ավելի մեծ օգուտ ստանալ։

Սոաջավոր բամբակագործները պարարտանյութերի մի
մասը հողին տալիս են հանքային նյութերի ձեռվ, իսկ մյուս
մասը՝ օրդանական։ Նրանք լավ իմանալով բամբակենու զար-
գացման առանձնահատկությունները, պարարտանյութերը ծախ-
սում են շատ նպատակահարմար ձեռվ։ Պարարտանյութերի զգալի
մասը հողին տալիս են ամառվա ամիսներին, բամբակենու կո-
լոնակալման, ծաղկման։ և կնքուղնորի, կազմակերպման շրջան-
ներում, այսինքն այն ժամանակ, երբ բամբակենուն սննդանյու-
թերի շատ մեծ կարիք է զգում։ Այսուհետեւ նրանք պարարտա-
ցումը սերտորեն կապում են մյուս ագրոձեռնարկութիւնների հետ
այն հաշվով, որ բույսերը կարողանան հողին արփող սննդա-
նյութը մաքակմալ չափով օգտագործել։

Այժմ բամբակենու սնուցումը դառել է մասսայական ագ-
րոձեռնարկում, որն, անկասկած, շատ լրական հետեանքներ է
տալիս։ Սակայն ինչպես ամեն մի ձեռնարկումից, այնպես էլ
սնուցումից կարելի է մեծ օգուտ ստանալ եթե այն կտար-
վում է ժամանակին և ճիշտ կերպով։ Հաճախ սնուցման ժամա-
նակ պարարտանյութերը շաղ են տալիս բամբակի միջարքային
տարածությունների վրա և կուլտիվացիալի ժամանակ հողով
թեթել ծածկում։ Այսպիսի սնուցումունքը իր սպատակին
չի հասնի, որովհետեւնման դեպքում պարարտանյութերի մեծ մասը
մնում է հողի երեսին և բույսերի կողմից չի օգտագործվում։
Ինչպես փորձերը ցույց են տալիս, սնուցումից մեծ արդյունք
ստանալու համար, պարարտանյութերը հողի մեջ պետք է ան-

ողայթան խորը մացնել, որպեսզի բռւյսէրի արմատներն այդ
նյութերից կարողանան օգտվիք: Պարարտանյութերը հողի մեջ
խորը մացնելու համար պետք է օգտագործել այդ նողատակի
համար կոյություն ունեցող հատուկ մեքինաները, խոլ այդ-
պիսիք շինելու դեղուամ, պարարտանյութերը պետք է տալ
միջաբարքային տարածություններում բացված ակտոների մեջ
և հետո՝ խորը կատարվող կուլտիվացիայով լավ խառնել հողի հետ:
Անուցումից անմիջապես հետո դաշտը պետք է դանդաղ
հոսանքով ջրել:

Սովետական Հայաստանի բամբակի դաշտերի մասսայական
պարարտացման համար այս տարվա ազգուանոններով նախա-
տեսված է հեկտարին տակ 90—120 կիլոգրամ ազոտ, նույնը ան
ֆոսֆոր և 40 կիլոգրամ կալիում:

Պարարտանյութերի այս նորմաները միանգամայն բավա-
րար են բաշճը բերք ստանալու համար, մանավանդ, եթե դրան
ավելացնենք նաև այն, որ կոլտողները լայնորեն օգտագործում
են աելական պարարտանյութեր՝ գոմաղը, խառնաղը, մոխիք և
այլն,—ապա բարձր բերքի համար բամբակի դաշտերը սննդա-
նյութերով լրիվ ապահովված են, մնում է, որ այդ նյութերը
ճիշտ օգտագործվեն:

Այն դեպքում, երբ դաշտը պարարտացվելու է 90 կիլոգրամ
ազոտով, 90 կգ. ֆոսֆորով և 40 կգ. կալիումով, ապա այդ
պարարտանյութերից 60-ական կիլոգրամ ազոտով ու ֆոսֆորը և
ամբողջ կալիումը հողին պետք է տակ հիմնական վարի ժամա-
նակ, խոլ մնացած 30-ական կիլոգրամ ազոտը և ֆոսֆորը՝ բամ-
բակենու կոկոնակալման շրջանում՝ որպես սննդում: Ազոտը և
ֆոսֆորը 120-ական կիլոգրամ գործածելու դեպքում դարձալ
60-ական կիլոգրամը պետք է տակ հիմնական վարի ժամանակ,
խոլ մնացած՝ կոկոնակալման և ծաղկման սկզբի շրջաններում:
Եթե նախատեսված պարարտանյութերը հողը չեն մացված աշ-
նան հիմնական վարի ժամանակ, ապա այդպիսիք պետք է օգ-
տագործել կրկնավարի ժամանակ:

Պարարտանյութերի այս ձևով բաշխումը, ելնելով հողի առ-
ուանձնահատկություններից, կարելի է որոշ չափով վարիժման
ենթարկել: Եթե հողամասը նախորդ տարին պարտանյութ-
չի ստացել կամ քիչ է ստացել, սննդանյութերից աղքատ է,

ապա նախքան ցանքը, արվող պարարտանյութերի քանակը պետք է ավելացնել: Օրինակ՝ 120 կիրոգրամ պղոտ գործածելու դեպքում 90-ը պետք է տալ նախքան ցանքը, իսկ 30-ը վեգետացիայի ընթացքում (կոկոնակալման շրջանում): Թեթև ուժեղ ջրթափանցիկ հողերում և այն հողերում, որոնք նախորդ տարին մեծ քանակությամբ պարարտանյութ են ստացել, նախքան ցանքը արվող պարարտանյութերի, հատկապես ազդոտի քառակը պետք է պակասեցնել: Առվույտատեղերի օգտագործման առաջին տարրում նախքան ցանքն աղոտ բոլորովին չպետք է տալ, իսկ ֆոսֆորի և կալիումի քանակն անհրաժեշտ է ավելացնել:

Եայն չափերով պետք է օգտագործել օրգանական պարարտանյութերը, որոնք բացի բույսերի համար սննդանյութ հանդիսանալուց, նաև հողի ֆիզիկական դրությունն են լավացնում: Այս տեսակետից, օրգանական նյութերով առաջին հերթին պետք է պարարտացնել ծանր, փոշիացած, ուժեղ կեղևակարող, թույլաղական հողերը: Գոմաղը և այլ օրգանական նյութերը պետք է տալ հիմնական վարի տակ:

Ց Ա Ն Ք

Ցանքի համար հողը նախապատրաստելու հետ միասին պետք է նախապատրաստել նաև սերմացուն: Բամբակի սերմացուն անպայման պետք է զաել և տեսակավորել: Միայն տեսակավոր, լավորակ և ախտահանված սերմերից կարելի է ստանալ բարձր բերք:

Ոչ պակաս կարեոր նշանակություն ունի ցանքի ժամկետը: Բամբակի դաշտերից մեծ արդյունք ստանալու համար ցանքը հնարավորության սահմաններում պետք է շուտ սկսել և ամենաակարգ ժամկետում ավարտել: Այս խնդրի վրա ստախանովական բամբակագործները հատուկ ուշագրություն են դարձնում: Նըրանք լավ գիտակցում են, որ ինչքան ըամբակի ծլումը և հետագա զարգացումը շուտ սկսվի, այնքան էլ մինչև ցրտահարությունների սկսվելը շատ կնգուղներ կրացվեն:

Սովետական Հայտասանի առաջավոր կոլխոզները բամբակի ցանքը միշտ ավարտում են մինչև մայիսի մեջը, 6—8 օրվա-

ընթացքում: Սակայն դեռ ևս շատ կոլխողներ ցանքը խիստ ձգձգում են: Աշխատանքները հաճախ անշնորհք կերպով կաղմակերպելու հետևանքով, ցանքը հաղիվ ավարտում են մայիսի կեսերին և նույնիսկ ավելի ուշ: Նման ուշացած ցանքերում բամբակի բույսերի հասունացումն էլ շատ է ուշանում, ուստի և պակաս բերք է ստացվում:

Սովորաբար բամբակի ցանքը պետք է սկսել, երբ հողում ջերմաստիճանը բարձրանում է մոտ 12—15 աստիճան: Ավելի վաղ ցանքերի գեղքում սերմերի ծլումը խիստ ձգձգվում է և նրանց մեծ մասը խոնավ ուստառը հողի մեջ երկար մնալով՝ նեխվում է, որի հետևանքով շատ վաղ կատարված ցանքերից նոսր և նվազ ծիւեր են ստացվում: Բացի այդ, շուտ ծլած բույսերը ենթակա են ուշ դարնանային ցրտահարությունների բացասական ազդեցության:

Սովետական Հայաստանում համաձայն 1941 թվի ազգուկանոնների, ցանքն սկսվելու է ապրիլի 15-ին և ավարտվելու է նույն ամսի 28-ին: Այս ժամկետը մեր պայմանների համար կարելի է համարել ամենալոնգունելին: Սակայն, առանձին գեղքերում, թեթև, շուտ տաքացող հողերում և կլիմայական առավել նպաստավոր պայմաններում ցանքը կարելի է սկսել մի մի քանի օր շուտ: Այն գեղքերում, երբ կլիմայական անբարենպաստ պայմանների հետևանքով ցանքը վերսիցյալ ժամկետից մի քանի օր ուշ է սկսվում, անհրաժեշտ է աշխատանքներն այնպես կաղմակերպել, որ ուշ սկսելը երբեք չանգըրադառնա ցանքը ճիշտ ժամկետին ավարտելու վրա:

Սերմացուի նորման հեկտարի համար սահմանվում է 80 կգ, ընդ որում վաղ ցանքի գեղքում և շատ ծանր հողերի համար սերմացուն վերսիցյալ նորմայից 10 տոկոսով ավելի պիտի վերցնել խակ թեթև հողերի և համեմատաբար ուշ ժամկետների ցանքի համար նույնքան պահաստ: Այն դաշտերը, որոնք խաչաձև են մշակվելու, սերմացուի նորման պետք է դարձնել 100 կգ:

Բամբակենու սերմերի կանոնավոր և միահավասար ծլելու գործում մեծ նշանակություն ունի ցանքի խորությունը: Շատ խորը կատարված ցանքից ստացվում են նոսր, նվազ ու դեղնած ծիւեր: Սա հետևանք է նրան, որ խոր ցանքած սերմերի ծիւերը չեն կարողանում հաղթահարել հողի հաստ շերտը և դուրս դար որի հետևանքով երկար ժամանակ հողի մեջ մնալով մեծ

մասնը փշանուամ է, իսկ ծլածներն էն ինչպես ասացինք շատ ան-
նորմալ են լինում: Այդ իսկ տեսակետից, ծանր, ուժեղ կեղե-
վակալող և ընդհանրապես «սահմառվար» կատարվող հողերում
սերմերը պետք է երես ցանել՝ 2—3 սմ. խորությամբ, իսկ ա-
րաք արված հողերում, որոնք ցանելուց անմիջապես հետո չեն
ջրվում, մի քիչ ավելի խոր պետք է ցանել, 4—5 սմ. խորու-
թյամբ, որպեսզի սերմերը հողի ավելի խոնավ շերտն ընկնեն:

Յանքը պետք է կատարել փոցիսված, հարթված դաշտերում
և անպայման ուղիղ շարքերով, պահպանելով նմխատերված
միջարքային տարածությունները:

Յանքն ավարտելուց անմիջապես հետո, դաշտի անկյուն-
ները, արակտորի պտույտի տեղերն անպայման պետք է լրա-
ցուցիչ ցանել:

Յանքից հետո ծլածուրն անհրաժեշտ է տալ միջարքային
տկոսներով: Այդ ակոսները պետք է պատրաստել ցանքի հետ
միաժամանակ, որի համար բամբակի տրակտորային շարքա-
ցաններն ունեն հատուկ հարմարություններ:

Յանքից և ծլածուրից հետո բոլոր միջոցները պետք է ձևոք
առնել, ուղակենդի սերմերը նորմալ և միահավասար ծին, որը շատ
կարևոր պայման է հետագայում հեկտարի վրա անհրաժեշտ քա-
նակությամբ բռնյա ունենալու համար: Այս նպաստելով տունծ-
նառին մեծ ուշադրություն պետք է դարձնել ծլածից կամ
անձրևներից հետո դաշտի մակերեսին կազմվող կեղեց փշքեր,
չծած և բաց մեջքած տեղերում լրացնեցիչ ցանք կատարելու
կամ սածիլելու աշխատանքների վրա:

Հողի կեղեակալման գեմ պայքարելու նպաստելով առաջա-
վոր կոլխոզները զաշաները պարարտացնում են օրգանական
պարարտանյութերով, Ֆանր հողերին տալիս են ավաղ, ցանքի
ժամանակ շարքերի վրա շաղ են տալիս փառած գոմազի, ավաղ
և այլն:

ՑԱՆՔԻ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՄՐԱՑՈՒՄԸ

Բամբակի յուրաքանչյուր բույսի նորմալ զարգացման հա-
մար անհրաժեշտ է, արամադրել հողի որոշ տարածություն, որը
կոչվում է սնման մակերես: Օրինակ՝ եթե մեկ հեկտարի վրա,

թողնված է բամբակի 100 000 բույս, ապա այդ թվի վրա բամբակելով 10 000 քառակուսի մետրը (մեկ հեկտարի մակերեսը) կստանանք 0,1 քառ. մետր, որը կլինի միջին հաշվով յուրաքանչյուր բամբակենու սնման մակերեսը: Կամ եթե բամբակի արգյալ դաշտում միջջարքային տարածություն թողնված է 70 սմ., միջինային տարածություն՝ 30 սմ., իսկ բնիքի մեջ 2 բույս, ապա ամեն մի բույսի սնման մակերեսը $\frac{70 \times 30}{2} = 1050$ քառ. սմ.:

Սնման մակերեսի նշանակությունը շատ մեծ է, նըանով է պայմանագործում բույսերին անհրաժեշտ խորավությամբ, սնընդանյութերով և արեգակի լույսով ապահովելու չափը: Սնման մակերեսն անհրաժեշտից փոքր լինելու դեպքում բույսերը միշտ յանց խանգարում են, եղած սննդանյութերը նրանց նորմալ պարզացումը չեն ապահովում: Նման պայմաններում ցանքը շատ խիտ լինելու հետևանքով, բույսերն առատ լույս չեն ստանում և ձգվում են դեպի վեր, առանց լավ ճյուղավորվելու և փարթամանալու: Այդ բոլորի հետևանքով բամբակի բույսերը շատ թույլ են պտղակալում և եղած պտույների մեծ մասն էլ վատ պայմանների հետևանքով զարդացման դեռ սկզբի արջանում թափվում են:

Ինչպես փոքր, այնպես էլ չափից դուրս մեծ սնման մակերեսը թողնելով նպատակահարթմար չէ, որովհետև սնման մեծ մակերեսի զննքում մեկ հեկտարի վրա թողնվող բամբակի բույսերի քանակը շատ քիչ կլինի և այդ պատճառով ընդհանուր բերքը պակաս կստացվի: Նկատի ունենալով այս բոլորը, բամբակենու համար պիտօք է նախատեսել սնման այնպիսի մակերես, որն ապահովի առավել բարձր բերք:

Բամբակենու բոլոր սորտերի և հողային, կիմայական ու ագրոսեխնիկական ձեռնարկումների բովոր պայմանների համար սնման միենալոյն մակերես վերցնել չի կարելի: Բամբակենու փարթամ աճող սորտերի կամ շատ բերքի, ուժեղ պարարտացված, օրգանական նյութերով հարուստ հողերի համար պիտօք է նախատեսել համեմատաբար սնման մեծ մակերես և ընդհակառակը, ոչ շատ փարթամ զարդացող ինչպես նաև սննդանյութերով համեմատաբար աղքատ թեթև ավաղային հողերի

համար պետք է նախատեսել անման ավելի փոքր մակերեսը
Սնման մակերեսի մեծությունը պայմանավորվում է միջ-
շարքային և միջնային տարածություններով և մեկ ընում
թողնվելիք բույսերի քանակով: Հասկանալի է, որ ինչքան այդ
տարածությունները մեծ լինեն և բների մեջ քիչ թվով բույ-
սեր, այնքան յուրաքանչյուր բույսի սնման մակերեսը մեծ
կլինի և, ընդհակառակը:

Սովետական Հայաստանի բամբակի դաշտերի համար 1941
թվի ագրոկանոններով նախատեսված են ցանքի խտության հե-
տևյալ վարիանտները՝

Աղ. № 2

Ցանքի սովորություն	Միջազգային տարածություն մմ.	Միջանային տարածություն մմ.	Մեկ բնի մեջ թողնվելիք բույսերի քանակը	Բույսերի ընդհանուր թիվը մեկ հեկտարի վրա
915	70	30	2	95 հազար
	70	15	1	95 »
	70	25	2	114 »
	65	30	2	101 »
	65	25	2	123 »
	65	15	1	101 »
246	70	30	2	95 հազար
	70	20	1	71 »
	70	17	1	84 »
	70	15	1	95 »
	70	25	2	114 »
	65	17	1	90 »
	65	25	2	123 »
	65	15	1	101 »

Ենելով ցանքող սորտի և տվյալ հողամասի առանձնահատ-
կություններից, պետք է ընտրել այս վարիանտներից մեկն ու
մեկը:

Բարձր բերք ստանալու կարևորագույն պայմաններից մեկն
էլ այն է, որ նախատեսված սնման մակերեսը նշտությամբ պահ-

պանվի և հեկուարի վրա ունենալ աներաժեշտ քանակությամբ բույսեր:

Դրա համար նոսրացումը պետք է կատարել ճիշտ և հողամասը լրիվ օգտագործել, այսինքն՝ ցանքի ժամանակ հողամասի եղբները և չցանված այլ մասերը լրացուցիչ կերպով ցանել, ինչպես նաև չծլած, բաց մնացած տեղերը նոսրացման ժամանակ կրկին ցանելու կամ սածիլելու միջոցով լրացնել:

Բամբակի բարձր բերքի վարպետների աշխատանքներում այս խնդիրը շատ կարեոր տեղ է գրավում: Նրանք իրենց դաշտերի յուրաքանչյուր բույսի համար ստեղծում են բոլոր անհրաժեշտ պայմանները, որպեսզի ոչ մի բույս իր զարգացմամբ և բերքատվությամբ հետ չմնա և միաժամանակ պահպանում են բույսերի անհրաժեշտ քանակը:

Սակայն շատ կոլխոզներում հաճախ անկանոն նոսրացնելու, միջընային տարածությունները նախատեսվածից ավելի թողնելու և չծլած տեղերը լրացնելու հետևանքով յուրաքանչյուր հեկտարի վրա շատ պեկի քիչ բույս է մնում, քան անհրաժեշտ էր թողնել որի հետևանքով բամբակի բերքը պակաս է ստացվում: Բերենք մի օրինակ. ընդունենք, որ բամբակի տվյալ զաշտի համար նախատեսված է միջընային տարածություն թողնել 15 սմ., իսկ բներքի մեջ 1 բույս: Այս դեպքում մեկ հեկտարի վրա պետք է մաս մոտ 95 հազար բույս: Նկատի ունենալով, որ մեր պայմաններում նորմալ զարգացած բամբակի մեկ բույսից սովորաբար միջին հաշվով հավաքվում է 12—15 կնուղ բերք, իսկ յուրաքանչյուր կնուղի բերքը միջին հաշվով մոտ 4 գրամ է, ապա մեկ հեկտարից կստացվի 45—57 ցենտներ բերք: Իսկ եթե բամբակի դաշտերը շատ լավ մշակվեն, լրիվ կիրառվեն առաջավոր բամբակակործների աղբուծենաբեկումների, ամբողջ կոմպլեքսը, այդ դեպքում յուրաքանչյուր բույսից պեկի շատ բերք կստացվի, քան վերը նշվածն է, հետեւյալ բամբակը մեկ հեկտարից ստացված բերքն էլ ավելի մեծ կլինի:

Սակայն շատ հաճախ նոսրացումն անկանոն կատարելու և շարքերի վրա բաց մնացած տեղերը լրացնելու հետևանքով հեկտարի վրա անհրաժեշտ քանակությամբ բույսեր չեն մնում: 90—100 հազար բույսի փոխարեն հազիվ 60—70 հազար բույս է մնում, որի հետևանքով մոտ 30 հազար բույսի բերք, այսինքն՝

տվյալ դիպքում մոտ 15—18 ցննուներ բերքի կոբաստ է լինում։ Պատահում է նաև, որ նախատեսված բույսերի քանակը թերիտ պահպանված է լինում, բայց անկանոն նորարացման հետեւվանքով տեղատեղ շատ նոր է լինում, իսկ տեղատեղ էլ այսօն խիտ, որ բույսերը լավ չեն զարգանում և վերջին հաշվով բերքը դարձյալ պակաս է ստացվում։ Կամ շատ դեպքերում նորացումն ուշացնում են, որի հետևանքով շարքերի վրա խիտ ծլած բույսերը միմյանց խանգարելով՝ լավ չեն զարգանում։

Բամբակենու ցանքերը պետք է նորացնել 2 անգամ, ընդ որում առաջին նորացումն անհրաժեշտ է պկալ, երբ ծիլերը մասսայականորեն երեսցել են, իսկ երկրորդ նորացումը՝ երբ բամբակի ծիլերն ունենում են 1—2 խկածիան տերեւ։ Այս ժամկետների պահպանումը խիտ անհրաժեշտ պայման է՝ բույսերի դարպացման հենց պկալի շրջանից նրանց լավագույն պայմանների մեջ դնելու համար,

Նորացման ժամանակ պետք է անպայման օգտագործել փայտից պատրաստված հատուկ չափեր, և պվելորդ բույսերը հեռացնելիս միջնային տարածությունները ոչ մի դեպքում նախատեսվածից ավելի կամ պակաս չթողնել, որպեսզի ամբողջ դաշտում միջնային տարածությունները միմյանց հավասար լինեն, այնողև ել բների մեջ թողնել նախատեսված չափով բույսեր։

Հաջորդ կարևոր խնդիրը, ինչպիս ասացինք, շարքերի վրա չծլած, բայց մնացած տեղերի լրացնումն է։ Դրա համար առաջին նորացման ժամանակ այդ տեղերում պետք է բնացան կատարել, բների միջտարածությունները թողնելով այնքան, որքան այդ դաշտի համար նախատեսված է։ Ամեն մի բնի մեջ անհրաժեշտ է ցանել նախորոք թրջված 4—5 սերմ և ջրեր բներում սերմերը ծլելուց հետո պետք է նորացնել և թողնել այնքան բույս, որքան այդ դաշտի համար նախատեսված է։

Այս նույն աշխատանքը կարելի է կատարել նաև սածիւման միջոցով, որը ճիշտ կատարելու դեպքում պկալի՝ լավ արդյունք է ստացվում։ Դրա համար խիտ ծլած տեղերից պետք է վերցնել սածիւներ և տնկել չծլած տեղերը։

Սածիւումից հաջող արդյունք ստանալու համար անհրա-

Ժեշտ է պղանպանել հետեւյալ պայմանները 1. սածիլումը կառաւրել հետճաշյա ժամերին, 2. սածիլները փոխադրել հազով և սածիլեւց անմիջապես հետո ջրել:

Այս ձևով կատարված սածիլումը տակն է միանդամայն գրական արդյունք և սերմերով լրացուցիչ ցանքի (նորոգման) հետ համեմատած՝ ավելի նպատակահարմար է, որովհետեւ սերմերից ստացված բույսերը մի քանի օրով իրենց դարձացմամբ հետ են մնում, իսկ հաջող կերպով սածիլած բամբակի բույսերը նորմալ ծլած բույսերի հետ հավասարապես աճում են:

Այս միջոցառումները ճշուռթյամբ և լրիվ կատարելով կպահպանվի. հեկտարի վրա անհրաժեշտ քանակությամբ բամբակի բույս ունենալը ու նրանց համար կստեղծվի միահավասար և նորմալ սննման մակերես, որը մյուս բոլոր ագրոնոմարդ կումբների լիվ կիրառման պայմաններում կապահովվի նուև հեկտարի լիարժեք և բարձր բերքատվությունը:

ԿՈՒԼՏԻՎԱՑԻԱ. ԵՎ ՔԱՂԱԿԱՆ

Դաշտերի ամառային մշակությունը՝ կուլտիվացիան և քաղհանը բամբակենու խնամքի աշխատանքներում չտփազանց կարեւոր և հիմնական տեղերից մեկն են զրավում: Կուլտիվացիայի և քաղհանի միջոցով բամբակի դաշտերը պահպանվում են փուխը և մոլախոտերից մաքուր վիճակում:

Հողի վարելուշերուը միշտ փուխը պահելով, հնարավոր կլինի կասեցնելու ջրի արագ գոլորշիացումը, նպաստելու օդի մուտքը հողի մեջ և ստեղծելու բամբակենու սննդառության համար բարենպատ պայմաններ: Այլ աշխատանքի միջոցով նաև ոչնչացվում են մոլախոտերը: Մոլախոտերը, ինչպես բոլոր կուլտուրական բույսերի, այնպես էլ բամբակի դաշտերի համար շատ մեծ չարքը են: Նրանք գցում են բամբակի բերքի թե քանակը և թե որակը, միաժամանակ մեծ չափով նպաստում են ֆնաստուների տարածմանը և գժվաբացնում են մշակման և բերքահավաքի աշխատանքները:

Ատախանովականների դաշտերի ամառային մշակության աշխատանքները շատ լավ հիմքերի վրա են դրված: Նրանք ամառվա ընթացքում գաշտերը 6—7 անգամ որակով փխրեց-

նուռմ և քաղհանուռմ են, որով դաշտերը միշտ պահում են փուխը և մոլախոտներից մաքուր վիճակում:

Պետք է ասել, որ այս աշխատանքում կարևորն այնքան քանակը չէ, որքան որակը: Շատ կոլխողներում թեև մշակումների քանակը պահպանում են, նույնիսկ անհրաժեշտից ավելի են անուռմ, բայց և այնպես նրանց դաշտերը գարձյալ մաքուր և փուխը չեն լինում:

Մոլախոտները հաջող ոչնչացնելու և բամբակի միջջարքային տարածությունների ամբապնդված հողը լավ փխրեցնելու համար, կուլտիվացիան պետք է կատարել խորը: Ինչպես առաջավոր բամբակագործների փորձն է ցույց տալիս, տրակառորային կուլտիվացիան պետք է կատարել առնավզն 14—16 ամ. խորությամբ: Համարյա նույն խորությամբ անհրաժեշտ է կատարել նաև ձեռքի քաղհանը, բացառությամբ առաջին քաղհանից, որի ժամանակ դեռևս շատ՝ մանր բույսերը չմնանելու համար, նրանց շուրջը փխրեցումը պիտի կատարել զգուշությամբ և քիչ ավելի երես:

Շատ կարենու նշանակություն ունի նաև առաջին մշակության ժամկետը: Առաջներում այդ մշակությունը շատ ուշ էին սկսում, նորացումից հետո, երբ բամբակենին որոշ չափով մեծացած էր լինում, իսկ այժմ առաջավոր բամբակագործներն առաջին մշակությունը (կուլտիվացիան և քաղհանը) սկսում են հենց որ բամբակի մասսայուկան ծիլերը երևում են: Այս միջոցով նրանք բամբակենու զարգացման համար հենց սկզբի շրջանից ստեղծում են լավագույն պայմաններ:

Կուլտիվացիայի և քաղհանի աշխատանքները սերտորեն պիտի կապել ջրելու ժամկետների հետ: Միշտ, յուրաքանչյուր պիտի կապել ջրել ժամանակի միջջարքային տարածությունները և շարքերի վրա հողը պետք է անպայման փխրեցնել և քաղհանել: Այս ժամկետների պահպանումը շատ կարևոր է, հողի մակերեսը փխրեցնելու, խոնավությունը պահպանելու և ջրելուց հետո դաշտում արագ զարգացող մոլախոտները ժամանակին ոչնչացնելու համար:

Յուրաքանչյուր կուլտիվացիային հաջորդում է ձեռքի քաղհանը: Այս աշխատանքի ժամանակ մոլախոտները ոչնչացնելու հետ միասին անհրաժեշտ է թմբերի վրայի հողը փոխադրել միջ-

շարքային ակոսները: Այս աշխատանքը կարևոր է նրա համար, որպեսզի թմբերի վրա կուտակված մատչելի սննդանյութերը փոխադրելով ակոսների մեջ՝ նրանք բռւյսերի կողմից օգտագործվեն: Սակայն այս գործողությունը պիտի կատարել այսպես, որ ակոսները հողով լցվեն և, մինչև հաջորդ ջրի համար նոր ակոսներ բաց անելը, դաշտի մակերեսը միանգամայն հարթ վնի, որպեսզի հողն ուժեղ չչորանա: Վերջինս չպետք է կիրառել այն հողերում, որոնք ճահճային են կամ ստորերկրյա ջըրերը մոռիկ:

Յուրաքանչյուր կուլտիվացիայի և քաղաքանի ժամանակ մոլախոտերի ստորերկրյա մասերը պետք է հավաքել և դաշտից դուրս հանել ու այրել:

Կուլտիվատորների աշխատանքներն ավարտած պիտի համարել, եթե դաշտում բռւյսերն այնքան են փարթամանում, որ միջարքային տարածությունները ծածկելով՝ անհնար են դարձնում կուլտիվատորի աշխատանքը: Սակայն զրանից հետո ևս բռւյսերի շուրջը քեթմեններով փիրեցնելը անհրաժեշտ է շարունակել, որովհետեւ այդ շրջանում հողն ուժեղ ամրապնդվում է և նրա մեջ օդն ու ջուրը դժվարությամբ են թափանցում:

ԽԱԶԱՁԵՎ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Բամբակի դաշտերի խաչաձև մշակությունը նոր և մեծ հեռանկար ունեցող ագրոնոմարկում է: Միության բամբակագործական շրջանների մի շարք կոլխոզներում, հատկապես Ռեզիլական ՍՍՌ-ի «Կղղ Շախմատչի» կոլխոզում բամբակի ամբողջ ցանքերը մշակում են խաչաձև և շատ մեծ արգյունք են ստանում:

Հայկական ՍՍՌ-ում պտղաբուծությունը, խաղողագործությունը և տեխնիկական կուլտուրաները զարգացնելու ձեռնարկությունների մասին ՍՍՌ Միության Ժողկոմսովետի և ՀԱՄԿ(Բ)Պ Կենտկոմի սեպտեմբերի 7-ի պատմական որոշման համաձայն, առաջիկա 3 տարում (մինչև 1944 թիվը) բամբակի ցանքերի ընդհանուր տարածության 50 տոկոսը պետք է կատարվի խաչաձև մշակությամբ:

Խաչաձև մշակության հությունն այն է, որ կուլտիվացիան կատարվում է երկու ուղղությամբ, մեկը՝ դաշտի երկարությամբ, մյուսը՝ դաշտի լայնությամբ:

Երկողմանի կռւլտիվացիայի միջոցով բամբակի ցանքերի ամառային խնամքի աշխատանքները մաքսիմալ չափով մեքեռնայացման են ենթարկվում, դաշտի տարածության ավելի քան 80 տոկոսը մշակվում է մեքենաներով, իսկ սովորական ձևով մշակելու միայն 55—60 տոկոսն է մշակվում:

Այսինքն՝ առաջին գեպքում ձևոքի աշխատանքի համար (փխրեցման և քաղհանի) մուռմ է դաշտի միայն 20 տոկոսը, իսկ երկրորդ գեպքում՝ 40—45 տոկոսը:


Խաչաձև մշակության այս առավելության շնորհիվ զգալի չափով բանվորական ուժ է անտեսվում, աղբուծեանարկումները կատարվում են լավագույն ժամկետներում և բարձր որակով:

Առաջին խաչաձև մշակության ժամանակ բամբակի ցանքերի միջինային տարածություններից ավելորդ բույսերը հեռացվում են կռւլտիվատորներով, որն զգալի չափով բարձրացնում է նորացման աշխատանքի արտադրողականությունն ու որակը: Մշակության այս ձեի մյուս առավելությունն այն է, որ մոլախոտերն ավելի հաջողությամբ են ոչնչացվում: Բացի այդ, երկողմանի կռւլտիվացիայի ժամանակ դաշտի որոշ մասը (մոտ 32 տոկոսը) մշակվում է կրկնակի, որի շնորհիվ հողը լավ է խառնվում և սննդանյութերը բույսերի կողմից ավելի լավ են օգտագործվում:

Խաչաձև մշակության այս առավելությունների շնորհիվ բամբակենու զարգացման համար ստեղծվում են շատ ավելի բարպայմաններ, ուստի և ավելի բարձր էլ բերք է ստացվում:

Ֆերգանայի մարզի բամբակի և առվույտի փորձակացանի կողմից, կոլխոզային արտադրության պայմաններում, կատարված մասսայական փորձերում՝ խաչաձև կռւլտիվացիան, համեմատած սովորական կռւլտիվացիայի հետ, բամբակի բերքը միքանի ցենտներով բարձրացրել է: Օրինակ՝ Կարլ-Մարքսի անվան կոլխոզում 35 հեկտար խաչաձև մշակվող դաշտի յուրաքանչյուր հեկտարից ստացվել է 36,8 ցենտ. բերք, իսկ սովորական ձևով մշակվող նույնքան տարածության յուրաքանչյուր հեկտարից ստացվել է 33,7 ցենտ. բերք:

Վորոշիլովի անվան կոլխոզում խաչաձև մշակվող դաշտերի հեկտարից ստացվել է 42,35 ց. բերք, իսկ սովորական ձևով մշակվողից՝ 37,2 ցենտ.:



Հայոց Տառապանի Ամենահայտնի և Ամենալավ Տպագիր

«Կղե՛Շախմատչի» կոլխոզում, որտեղ բամբակի ամբողջ ցանքերը խաչաձև են մշակվում, բամբակի բերքատվությունը տարեց-տարի բարձրանում է: Կոլխոզի բամբակի միջին բերքատվությունը 1931 թվին եղել է 18,5 տես., 1935 թվին՝ 24,7 տես., իսկ 1939 թվին՝ 30 տեսաներ:

Խաչաձև կուլտիվացիա կարելի է կատարել ինչպես արակառորային, այնպես էլ ձիու կուլտիվատորներով, կամ՝ մի ուղղությամբ տրակտորային կուլտիվատորով, իսկ՝ մյուս ուղղությամբ (լայնությամբ)՝ ձիու կուլտիվատորով: Վերջին ձևը նպատակահարմար է կիրառել այնպիսի դաշտերում, որոնք նեղ ու երկար են:

Մշակությունը հաջող կատարելու, հատկապես տրակտորային կուլտիվատորները բարձր արտադրողականությամբ աշխատեցնելու, ինչպես նաև արակտորի պառույտների քանակը պակասեցնելու համար, խաչաձև մշակության անհրաժեշտ է տրամադրել կոլխոզի ամենամեծ մասսիվները: Այս ձևով մշակվող դաշտերի երկարությունը և լայնությունը 120-ական մետրից պակաս չպետք է լինեն: Տրակտորային կուլտիվացիայի համար ցանքը պետք է տրակտորային շարքացաններով կատարված լինի, անպայման ուղիղ շարքերով և միջշարքային հավասար տարածություններով:

Առանձնապես մեծ, ուշադրություն պետք է դարձնել սերմերի ծլման վրա: Խաչաձև մշակվող դաշտերում սերմերը պետք է միահամուռ և հավասարաշափ ծլած լինեն: Շարքերում չծլած, բաց մենացած տեղեր չպետք է լինեն, ընդ որում յուրաքանչյուր մեկ մետր տարածության վրա պետք է ծլած լինի առնավազն 25—30 ըույս:

Խաչաձև մշակելու համար առանձնացվող դաշտերի ցանքը ինչպես նաև հետագա կուլտիվացիաները, պետք է հանձնարարել ամենափորձված տրակտորիստների:

Առաջին խաչաձեկվ կուլտիվացիան պիտի սկսել, երբ բամբակինու ծիլերը սկսում են մասսայականորեն երկար կուլտիվացիան նախ անհրաժեշտ է կատարել դաշտի երկարությամբ և անմիջապես հետո՝ լայնությամբ: Դաշտի լայնությամբ կատարվող կուլտիվացիայի ժամանակ հեռացվում են նաև միջինացին բույսերը:

Առաջին երկկողմանի կուլտիվացիան ավարտելուց անմի-

ջապես հետո կամ հենց ընդլայնական կուլտիվացիայի ժամանակ, կուլտիվատորի հետքով պետք է սկսել քաղնանի և բների մեջ նոսրացման աշխատանքները:

Խաչտան վշակաւրյան հաջողաւրյունը մեծ չափով կախված է կուլտիվատորների աշխատող մասերի (դանակների, քարիկների) նիշտ գասավորումից: Այդ մասերը պետք է զասավորել այնպես, որ հաջորդ ընդլայնական կուլտիվացիաների ժամանակ տրակտորը և կուլտիվատորը շարքերի միջով ազատ անցնեն ու ըռոյներին չլինանեն:


Սշխատանքները հեշտացնելու համար ցանկալի է, որ դաշտի երկարությամբ և լայնությամբ կատարվող կուլտիվացիաների ժամանակ կուլտիվատորի աշխատող մասերի զասավորությունը և նրանց հեռավորությունները միատեսակ լինեն: Նկատի ունենալով այդ, մեքենայի մասերը պետք է զասավորել այնպես, որ դրանք հարմար լինեն թե ըստ երկարության և թե ըստ լայնության հաջող կուլտիվացիա կատարելու համար: Սակայն այս սկզբունքը հաճախ հնարավոր չի լինում բոլոր մշակումների ժամանակ պահպանել:

Մեզ մոտ սովորական տրակտորային կուլտիվացիայի ժամանակ 70 սմ. միջջարքային տարածության մեջ կուլտիվատորի դանակները և թաթիկը աշխատում են (փխրեցնում են) 40 սմ. լայնությամբ (առաջին կուլտիվացիայի ժամանակ), իսկ այդ տարածության երկու կողմերից ննում է 15-ական՝ սմ. պաշտպանիչ շերտ: Այդ նույն դասավորությունը կարելի է օգտագործել նաև ընդլայնական կուլտիվացիայի ժամանակ, ըստ որում առաջինը ընդլայնական կուլտիվացիայի դեպքում 40 սմ. չափով բռյաները կհանվեն, իսկ բռյաները հանված տարածությունների մեջ կմնան 30-ական ամ երկարությամբ բներ (փնջեր):

Այսպիսով, փնջերի դասավորությունը կլինի՝ 70×70 , այսինքն, առաջին 70 սանտիմետրը կլինի միջջարքային տարածություն, իսկ երկրորդ 70 սանտիմետրի 40-ը՝ միջինչային տարածություն և 30-ը փնջի երկարությունը:


Երկրորդ և հաջորդ ընդլայնական կուլտիվացիաների ժամանակ բռյաների այս դասավորությունը նույնությամբ թողնելու դեպքում որոշ գժվարություններ կառաջանան, որովհետեւ 40 սմ. միջինչային տարածությունից տրակտորի անիվ-

Ներն ու կուլտիվատորն անցնելիս կաբող են բույսերը մնասել։
Այդ պատճառով առաջին կուլտիվացիայից հետո կատարվող
նոսրացման ժամանակ վնչերի կողքերից հնդական ունտիմետը



Նկ. 2. Կուլտիվատորի աշխատանքն առաջին ընդայնական
կուլտիվացիայի ժամանակ։

տարածությամբ բույսերը պետք է հեռացնել, որպեսզի միջին-
ջային տարածությունները դառնան 50-ական սմ., իսկ վնջերը՝
20-ական սմ։ Փնջերի արդարիքի դասավորումը նաև հնարագորու-
թյուն կտա բույսերի լայն ընտրություն կատարել և փնջերի
կողքերի մնացած բույսերը հեռացնելով՝ թողնել ամենալավը։
Կարելի է նաև փնջերի այլ դասավորում կիրառել, օրինակ՝
 70×75 , ընդ որում միջինջային տարածություն կմնա 55սմ.,
իսկ փնջի երկարությունը՝ 20 սմ։ Այս դեպքում թեպետ միջ-



Ա.... ՓՈՒՏՆ - 20. ԱՄ

Բ.... ՄԻԶՓՆՁԱԿՆ ՀԱՐԱԾՈՒՐՅՈՒՆ - 50. ԱՄ

ՄԻԶՓՆՁԱԿՆ ՄԱՐԱԾՈՒՐՅՈՒՆՆԵՐԻՑ Y-1 ՄԱՐԱԿԱՆՈՐԻ անցումը
երկրորդ ընդլայնական կուլտիվացիայի ժամանակի

փնջային տարածությունները՝ հինգ սահմանմետրով ավելի մեծ կլինեն, բայց հեկտարի վրա բույսերի ընդհանուր քանակը մի քանի հազարով պահաս կատացվի: Նման վարիանտներ կարելի է կիրառել այնպիսի դաշտերում, որտեղ սպասվում է բամբակենու սովորականից ավելի փարթամ աճեցողություն:

Խաչաձև մշակության համար կարելի է օգտագործել ինչպես Y—1 այնպես էլ Y—2 տրակտորներ. վերջինս այդ աշխատանքի համար ավելի նպաստակահարմար է:

Կուլտիվատորների լանող մասերի յուրաքանչյուր սեկցիան բոլոր գեղղերում ել պետք է կազմված լինի երկու դանակից և մեկ սագաձև նեղ թաթիկից:

Սուաջին ընդլայնական կուլտիվացիայի ժամանակ նոսրացումը կանոնավոր կատարելու, միջնջային տարածություններից բույսերը հաջողությամբ հեռացնելու համար կուլտիվատորը պիտի աշխատեցնել 6—8 սմ. խորությամբ, իսկ մնացած դեղղերում նույն խորությամբ, ինչ որ ագրոկանոններով նախառաված է սովորական կուլտիվացիայի համար:

Խաչաձև մշակության օխտեմում առաջին ընդլայնական կուլտիվացիան ամենապատախանառ աշխատանքն է հանդիսանալ: Այս կուլտիվացիայի նշությունը է կախված հաջորդ բնդլայնական կուլտիվացիաների հաջողությունը:

Այս կուլտիվացիայի ժամանակ տրակտորի առաջին երթն անհրաժեշտ է կատարել նախօրոք նշված ուղիղով, իսկ հաջորդ երթերի ուղղությունը պահպանելու համար ծայրի սագաձև թաթիկը պետք է շարժվի նախորդ երթի ժամանակ իր թողած հետքով: Այս աշխատանքի ժամանակ տրակտորը պիտի աշխատեցնել առաջին արագությամբ:


Հաջորդ կուլտիվացիաները պետք է կատարել նույն կարգով. նախ՝ դաշտի երկարությամբ, ապա՝ լայնությամբ և հետեւ որ ընդլայնական կուլտիվացիաների ժամանակ փնջերում բույսերը չվնասվեն:

Ընդլայնական կուլտիվացիան միշտ անհրաժեշտ է սկսել դաշտի այն տեղից, որտեղից սկսված է եղել առաջին ընդլայնական կուլտիվացիան:

Այս ձեռով մշակվող դաշտերում ջուրը պետք է տալ դաշտի երկարությամբ—միջջարգային տարածություններով, որի համար

յուրաքանչյուր ջրից առաջ աճերաժեղտ է հասունել ակոսներ բաց անել:

Երկրորդ ընդլայնական կուլտիվացիայից սկսած բույսերը վնասվելուց պաշտպանելու համար պետք է օգտագործել պաշտպանող հարմարություններ (վահաններ):



Կուլտիվատորի աշխատանքը երկրորդ ընդլայնական կուլտիվացիայի ժամանակ:

Կաչաձև մշակվող դաշտերում առանձնապես մեծ ուշադրություն պիտի դարձնել բույսերի քանակի վրա: Սովորաբար այս ձևով մշակվող դաշտերում հեկտարի վրա ավելի քիչ բույս է մնում, քան սովորական, այսինքն՝ միայն մի ուղղությամբ կուլտիվացիա կատարվող դաշտերում: Այս հանգամանքը բերքի քանակի վրա բացասաբար չի անդրադառնում, որովհետեւ երկկողմանի մշակության շնորհիվ բույսերն ավելի լավ են զարգանում և հետեւաբար ավելի բարձր ել բերք են տալիս: Սակայն, եթե անու-

շաղրության հետևանքով նախառեսվածից էլ պակաս լինի բույ-
սերի թիվը, այդ գեղքում անկասկած, ընդհանուր բերքը պա-
կաս կստացվի: Նկատի ունենալով այս, բոլոր միջոցները պետք
է ձեռք առնել, որպեսզի թե փնջերի թիվը և թե փնջերի մեջ
բույսերի քանակը լրիվ պահպանվեն:

Փնջերի դասավորման 70×75 վարիանտի գեղքում մեկ
հեկտարի վրա կստացվի մոտ 20.400 փունջ: Յուրաքանչյուր
փնջում, ինչպես այլ բամբակագործական ուսուցութիւնների փոր-
ձերն են ցույց տալիս, պետք է թողնել 3—4 բույս, ընդ որում
ուժեղ հողերում, որտեղ շատ փարթամ աճող բույսեր են սպաս-
վում, պետք է թողնել 3 բույս, իսկ մնացած դեպքերում՝ 4 բույս:

Փնջերի մեջ 3 բույս թողնելու դեպքում հեկտարի վրա
կստացվի 61.200 բույս, իսկ 4 բույսի գեղքում՝ 81.600 բույս:

Ինչպես տեսնում ենք, այս երկու վարիանտների տարրերու-
թյունը բավականաչափ մեծ է, ուստի ընտրությունը պետք է
ճիշտ կատարել:

Ինչպես ասել ենք, առաջին ընդլայնական կուլտիվացիայից
անմիջապես հետո կամ ուղղակի կուլտիվատորի հետքով պիտի
սկսել առաջին նոսրացումը: Նոսրացման հետ միաժամանակ
անհրաժեշտ է փնջերի շուրջը խնամքով կանոնավորել — հողը
միխրեցնել մոլախտերը ոչնչացնել և բույսերի վրա թափված
հողը հետացնել:

Առաջին նոսրացման ժամանակ փնջերում պետք է թող-
նել 5—6 բույս, ընդ որում փնջերի թե միջից և թե կողքերից
ավելորդ բույսերը պետք է հետացնել: Փնջերի կողքերից բույ-
սերը պիտի հետացնել այն հաշվով, որ փնջի վերջնական եր-
կարությունը դառնա 20 սմ., իսկ միջինիցին տարածություն-
ները՝ 50 սմ.: Նոսրացման ժամանակ անպայման պիտի օգտա-
գործել փայտից պատրաստած չափեր, որպեսզի հիշյալ տարա-
ծությունները ճշտությամբ պահպանվեն: Պետք է հետեւ նաև,
որ փնջերում անհրաժեշտ քանակությամբ բույսեր մնան:

Այն փնջերում, որտեղ բույսերի քանակը պակաս է կամ
բոլորովին չկան, անհրաժեշտ է խիտ տեղերի հանված բույսերով
սածիլում կատարել:

Երկրորդ նոսրացումը պետք է սկսել երբ բամբակի բույ-
սերն ունենում են 1-2 խակական տերև: Այս նոսրացման ժամա-

նակ փնջերի մեջ վերջնականապես ողբաք է թողնել 3-4 բույս ինչպես ասել ենք, Յ բույս ովհատի թողնել միայն այն դեպքերում, երբ սպասվում է շատ փարթամ աճեցողություն, հատկապես 246 սորտի ցանքերում:

Նոսրացումները ովհատի կատարել այն հաշվով, որ փնջերի մեջ վերջնականապես թողնվելիք 3-4 բույսերից մեկական մնան փնջի ծայրերին, իսկ մնացած մեկը կամ երկուը մեջտեղում, հավասար հեռավորությունների վրա:

ԴԱՇՏԵՐԻ ՈՌՈԳՈՒՄԸ

Վեգետացիայի ընթացքում բամբակենին հսկայական քանակությամբ ջուր է ծախսում: Բամբակենուն ջուրն անհրաժեշտ է նրա աճման ամենասկզբնական շրջանից սկսած, սակայն ջրի պահանջը զարգացման տարրեր շրջաններում՝ տարրեր է: Բամբակենին մինչև կոկոնակալման շրջանը համեմատարար քիչ ջուր է պահանջում, իսկ կոկոնակալման շրջանից սկսած՝ ջրի պահանջը գնալով մեծանում է և ծաղկման շրջանում, որ համընկնում է ամենաշող ամիսներին, ջրի պահանջը շատ մեծ է լինում, իսկ հասունացման շրջանում այդ պահանջը աստիճանաբար փոքրանում է: Ծաղկման շրջանում բամբակի յուրաքանչյուր բույս օրական մոտավորապես ծախսում է 1,2 կիլոգրամ ջուր: Եթե այս թվին ավելացնենք նաև նողի մակերեսից գոլորշիացող ջրի քանակը, ապա ամառվա շող ամիսներին մեկ չեկատրի ջրի օրվա ծախսը հսկայական չափերի կհասնի (մոտ 120—300 լի. մետր): Ընդհանրապես բամբակենու զարգացումը դեկավարելու և նրանից բարձր բերք ստանալու գործում ջուրը հանդիսանում է հղոր գործուններից մեկը, մանավանդ ամառվա ամիսներին, երբ օդի ջերմաստիճանը շատ բարձր է և եղանակը չոր, ջուրը վճռական դեր է խաղում:

Այդ շրջանում ջուրն անկանոն կամ անբավարար տալու դեպքում բամբակենու պաղապիփումը մեծ չափերի է հասնում և բերքի հսկայական կորուստ է տեղի ունենում:

Ինչպես չոր, այնպիս էլ չափերից դուրս խոնավ պայմանները բամբակենու զարգացման և բերքատվության վրա բացասական հետևանք են ունենում: Բամբակի դաշտերից բարձր բերք ստա-

համար ամբողջ վեգետացիայի ընթացքում հողում պիտք է պահպանել օպտիմալ խոնավություն:

Այս խնդրում ևս առաջարկոր կոլլոզնիկները մեծ նվաճում-ներ են ձեռք բերել: Նրանք անտես անելով այս ուղղությամբ եղած նախկին սխալ տեռակետները, բամբակենու զարգացման հենց սկզբի շրջանից, ինչպես բոլոր աշխատանքների համար, այնպես էլ դաշտերը խոնավությամբ ապահովելու տեսակետից ստեղծեցին լավագույն պայմաններ:

Այժմ առաջին վեգետացիոն ջուրը համեմատաբար ավելի շուտ է արվում, որի շնորհիվ բամբակենին ավելի փարթամ ու արագ է աճում և առատ էլ պտղակալում է:

Սակայն առաջին ջուրը շատ շուտ էլ չի կարելի տալ, որովհետեւ գարնանը բամբակի երիտասարդ բույսերն այնքան ջրի պահանջ չեն զգում, որքան ջերմության, իսկ ավելորդ ջուրը հողում կտտեղծի գերխոնավություն և կցցի հողի ջերմաստիճանը: Նկատի ունենալով այս, անհրաժեշտ է հաշվի առնել հողի վիճակը, բույսերի պահանջը և ըստ այնմ էլ ջուրը տալ ճիշտ ժամանակին: Արաթ արված հողերում առաջին ջուրն ավելի շուտ պետք է տալ քան սափառվար արվող հողերում:

Հաջորդ ջրերը տալիս, առաջավոր բամբակագործները դարձյալ հիմք են ընդունում բամբակենու պահանջը և միշտ հետեւ դում են, որ բամբակենու աճումը և զարգացումը (ծաղկումն ու պտղակալումը) հավասար տեմպով ընթանան: Եթե բամբակենին շատ փարթամ է աճում, իսկ ծաղկումը հետ է մնում, ապա ջուրը քիչ ուշացնում են, որպեսզի ծաղկման տեմպն արագանա և հասունացումը չձգձգվի, և ընդհակառակը, եթե բամբակենին թույլ է աճում, բայց ծաղկումն արագ է տեղի ունենում, ապա այս գեղագում ջրելը քիչ արագացնում են, որպեսզի բամբակի բույսերը փարթամանան և առատ պտղակալեն:

Բամբակի հասունացման շրջանում, ինչպես ասացինք, ջրի կարիքն ավելի քիչ է զգացվում: Այս շրջանում ավելորդ խոնավությունը ձգձգում է բամբակի հասունացումը և մինչև ցրտահարություններն ավելի քիչ քանակությամբ կնդուղներ են բացվում, ուստի այդ շրջանում հողում պետք է չափավոր խոնավություն պահպանել որպեսզի կնդուղները նորմալ հասունանան և ժամանակին բացվեն:

Գիտահետազոտական հիմնարկների և առաջավորների փոքր-ձերը ցույց են տալիս, որ ստորեկրյա ջրերը խորը, դորշ հո-ղերում բամբակի դաշտերը պիտի ջրել մտ 6—9 անգամ, ընդ-որում համեմատաբար ծանր հողերը ավելի քիչ պիտի ջրել, քան թեթև կամ թեք դիրք ունեցող հողերը: Զուրը հաճախակի պիտք-է տալ նաև թույլ ջրթափանցկություն ունեցող, խիստ ծանր հողերին, որոնք ջրելուց հետո շատ շուտ չորանում են:

Վեգետացիայի ընթացքում տրվող ջրերն ըստ բամբակի դարպացման առանձին շրջանների մեծ մասամբ բաշխվում են հետեւյալ կերպ՝ 1. մինչև ծաղկումը 1—2 ջուր, 2. ծաղկման շրջանում 4—5 ջուր և 3. հանունացման շրջանում 1—2 ջուր: Վեգետացիայի սկզբի և վերջի շրջաններում ջուրը տրվում է ավելի փոքր նորմաներով, քան ծաղկման շրջանում:

Առաջավոր կոլխոզնիկները հատուկ ուշադրություն են դարձնում ջրելու ձեւերի կատարելագործման վրա: Նրանք ար-դեն վազուց լայնորեն կիրառում են ակոսներով ջրելու ձեւը, որը համեմատած մարգային կամ ողողման ձեի հետ՝ մի շարք առա-վելություններ ունի:

Մարգային սիստեմի բացառական կողմերը շատ են: Այս ձեւի գեպքում ջուրը ծախսվում է անխնա, հողի ստրուկտուրան վատանում է, վարելաշերտը շատ ուժեղ ամբապնդվում և հողի մակերեսն ուժեղ կեղեվակալում է: Մարգերով ջրելու ժամանակ հողի ռոլոր անցքերը լցվում են ջրով և օդի համար տեղ չի մնում: Դաշտը հավասարաչափ չի ջրվում, մարգերի բարձր մասը քիչ, իսկ ցածրի մասը շատ առատ է ջրվում, իսկ որոշ հողերում նույնիսկ՝ ջուրը հաճախ լճանում է: Այս բոլորի հետևանքով բամբակի բույսերը թույլ և անհավասար են զարգանում:

Ակոսներով ջրելու ձեն անհամեմատ ավելի կատարելագործ-ված է և չունի առաջնի բացառական կողմերը: Սակայն ակո-սային ջուրն անհամեմատ ավելի գրական արդյունք է տալիս, եթե ակոսներին ջուրը տրվում է խողովակներով:

ԱԿՈՍԱ-ԽՈՂՈՎԱԿԱՅԻՆ ԶՈՒՐ

Զրի հոսանքը դաշտի վրա խողովակների միջոցով կանոնա-վորելու այս եղանակն արտադրության մեջ առաջին անգամ

կիրառվեց ագրոնոմ Կ. Յ. Պիոտրովսկու նախաձեռնությամբ:
Այժմ խողովակային ջրումը բամբակի դաշտերի ստախանովա-
կանների կողմէց լայն չափերով կիրառվում է: Ուզբեկստանում
վերջին 1—2 տարվա փորձերը ցույց տվին ջրելու այս ձեփ խո-
շոր առավելությունները:

Մեղ մոտ, սովետական Հայաստանի Դամարլուի շրջանում,
1939-40 թվականներին ՄՏԿ-ի և հողբաժնի գլխավոր ագրոնոմ-
ների նախաձեռնությամբ այս ուղղությամբ կատարված կոլխո-
զային լայն փորձերը նույնպես շատ լավ արդյունք տվին:

ՍՍՌ Միության ժողկոմսովեստի և ՀԱՄԿ(բ)Պ կենտկոմի
սեպտեմբերի 7-ի որոշման համաձայն մինչև 1943 թիվը սովետա-
կան Հայաստանի բամբակի ցանքերի ամբողջ տարածության
վրա պետք է յուրացվի ակոսա-խողովակային ջրումը:

Ակոսա-խողովակային ջրումն ունի հետևյալ հիմնական առա-
վելությունները:—

1. Խողովակաների միջոցով ջուրը բամբակի միջարքային
ակոսների մեջ բաց է թողնվում բարակ հոսանքով, որի շորենիվ
ջուրը չի ողողում դաշտի ամբողջ մակերեսը, այլ ակոսների մեջ
դանդաղ հոսելով՝ լավ ներծծվում, թափանցում է հողի մեջ. դրա
հետևանքով լույսերի արմատների գրաված տարածությունը
խոնավությամբ լրիվ հազենում է և ջուրը բաշխվում է հաղա-
սարաչափ:

2. Զրի դանդաղ և բարակ հոսանքի շնորհիվ հողի ստրուկ-
տուրան չի քայլայլում, բույսերի շուրջը համարյա չի կեղեա-
կալում, հետևապես ինչպես օդի փոխանակությունը հողի մեջ
(այերացիան), նույնպես և հողի բերողիքական պրոցեսները շատ
ավելի լավ են կատարվում:

3. Ակոսա-խողովակային ձեռվ ջրելու ժամանակ ջուրը ծախս-
վում է խնայողաբար:

4. Այս ձեռվ հնարավոր է միաժամանակ մեծ տարածու-
թյուն ջրել, որով բարձրանում է թե հետագա աշխատանքների
որակը և թե արտադրողականությունը, կուլտիվացիան և քաղ-
հանն ավելի ճշգտ և բարձրորակ է կատարվում:

5. Գիշերային ջրումը ակոսա-խողովակային ձեռվ կատար-
վում է ավելի բարձր արտադրողականությամբ և ավելի որակով:
Ակոսա-խողովակային ձեռվ ջրելու այս բոլոր դրական հող-

մերի շնորհիվ բամբակենին ավելի փարթամ է աճում, ավելի առաստ է պաղակարում, պաղապիթում քիչ է լինում, հետեւարար ավելի բարձր բերք է ստացվում:

Ակոսա-խողովակային ջրումը հաջող կատարելու համար, նախքան ցանքը, հօդամտու անհարթության ներն անպայման պետք է ուղղել, փոսերը լցնել, բարձրությունները հարթեցնել, մի խոռոշով՝ պետք է բոլոր միջոցները ձեռք առնել, որպեսզի ջուրը հողամասի բնական թեքությամբ սահուն և հանգարտ հոսի ու հողամասը հավասարաշափ խոնավանա: Հողամասը պիտի հարթեցնել հատուկ հարթիչներով: Խողովակային ձևով ջրելու մյուս կարեռ պայմանն այն է, որ ջրելու մարգային ձևից անպայման պետք է տնօնել ակոսային ձևին: Առանց այս կարեռը պայմաններն ապահովելու՝ կանոնավոր ջրել հնարավոր չէ:

Մեր ռեսպուբլիկայի բամբակագործական շրջաններում աստիճանաբար անցնում են ակոսներով ջրելու ձևին, բայց դարձյալ ծլաջուրը արվում է մարգերով: Այս հանգամանքն ակոսային ջրի առավելություններն զգալիորեն նվազեցնում է: Անհրաժեշտ է հենց ծլաջրից սկսած՝ ջուրն ակոսներով տալ, որպեսզի բամբակի սերմերի ծլման համար ավելի լավ պայմաններ ստեղծվին և մի շարք ավելորդ աշխատանքներ կրնատել (մարգեր պատրաստելը, տափանելը և այլն): Այդ ապահովելու համար, ինչպես ասել ենք, բամբակի ցանքի հետ միաժամանակ պետք է ակոսաներ հանել և կամ սափուղարի փոխարեն նախօրոք արաթ անել:


Դամարլուի շրջանի մի շարք կոլլուգներում 1940 թվին բամբակի դաշտերի ծլաջուրը տվին ցանքի հետ միաժամանակ հանված ակոսներով և դրական արդյունքի հասան:

Ակոսա-խողովակային ձևով ջրելու համար բամբակի ցանքից անմիջապես հետո, ակոսների ծայրին, հողամասի բարձր պիտի պետք է պատրաստել օժանդակ ջրատար առուներ (օկտոպիկներ), որոնցից ջուրը խողովակների միջոցով պետք է հռումիջշարքային ակոսները:

Օկտոպիկները կարելի է հանել ձիու մեծ բուկլիցներով կամ ակոսահան տրակտորային հատուկ գործիքներով, իսկ այդպիսիք գործեր որոնց երկու երթի միջացով կարելի է հաջող ակոսներ բաց անել և հետո բահով ուղղել:

Օկառիկների խորությունը պետք է լինի միջջարքային ակոսների խորությունից $10-15$ սմ. ավելի, այսինքն՝ $25-30$ սմ., խոկ լայնությունը՝ $40-50$ սմ. (վերին մասում):

Բացի հողամասի ծայրում պատրաստված օկառիկներից, նայելով հողամասի չափին, դիրքին կամ հողի տեսակին, հաճախ կարիք է լինում միմյանց զուգահեռ մի քանի օկասիկներ պատրաստել:




Նկ. 5. Օկառիկների դասավորումը

Օկառիկները պետք է պատրաստել հատուկ խնամքով, հաշվի առնելով հողամասի դիրքը, որպեսզի նրանց մեջ ջուրը շատ դանգաղ և բոլոր ակոսների մեջ միաժամանակ ու հավասար հոսի: Օկառիկների մեջ ջուրն արագ հոսելու գետքում հնարավոր չի լինի ակոսներին խողովակներով հավասարաչափ ջուր տալ:

Երբեմն, հողամասի անհարմար դիրքի պատճառով, դժվար է լինում առանց թեքության, հարթ օկառիկներ պատրաստել: Այդպիսի դեսկերում օկառիկներին զուգահեռ պետք է պատրաստել համեմատաբար կարճ, առանց թեքության օժանդակ ակոսներ, որոնց միջոցով հնարավոր կլինի ջուրը հավասարաչափ բաշխել միջարքային ակոսների մեջ: Այս օժանդակ ակոսներն անհրաժեշտ են պատրաստել միջջարքային ակոսների անմիջապես ծայրին, բույսերի մոտ, այն հաշվով, որ նրանք հատուկ տարածություն չգրավեն:

Օժանդակ ակոսները պետք է ջուր մատակաբարեն որոշ թվով (3-8) միջարքային ակոսների, ընդ որում օկտոբեկի թեքությունը որքան մեծ լինի, այնքան յուրաքանչյուր օժանդակ ակոսի կողմից սպասարկվող միջարքային ակոսների թիվը քիչ կլինի:



Նկ. 6. Օժանդակ ակոսների դասակորումը

Յուրաքանչյուր անգամ ջրելուց առաջ բամբակի դաշտերի միջարքային տարածություններում տրակտորային կամ ձիու կուլտիվատորներով ակոսներ պետք է բաց անել: Ակոսները պետք է ունենան 12-18 սմ. խորություն, ընդ որում թեթև, մակերեսը լավ հարթեցված հողում խորությունը պետք է փոքր անել (12-14 սմ.), իսկ ծանր հողերում՝ քիչ ավելի խոր (մոտ 15-18 սմ.): Ակոսների լայնությունը (վերին, մասում) պետք է լինի 20-25 սանտիմետրից ոչ ավելի:


Ակոսների երկարությունը կամ միջօկտոբեկային տարածությունների չափը պայմանավորվում է հողի տեսակով, գիրքով և չափով: Բնդիանը ապահովում որքան հողամասը թեթև ավազային է, այնքան ակոսները կարճ պիտի անեն խոկ ծանր հողերում՝ երկար: Բացի այդ, որքան հողամասի թեքությունը մեծ է, այնքան ակոսները կարճ պետք է լինեն և ընդհակառակը:

Ուղբեկտանում կատարված փորձերը ցույց են տալիս, որ ակոսների երկարությունը կարելի է սահմանել թեթև հողերում՝ 80-100 մետր, միջակ ծանրության հողերում՝ 120-150 մետր, իսկ ծանր հողերում՝ 180-200 մետր: Այն դեպքում, եթե հողը ծանր է և հողամասը շատ հարթ գիրք ունի, կարելի է ավելի

Երկար ակոսներ պատրաստել (300—500 մետր). իսկ անհարմար գիրք ունեցող հողերում՝ ընդհակառակը, կարիք է լինում ակոսների երկարությունը կրճատել մինչև 50—80 մետրի:

Ակոսները պետք է պատրաստել խնամքով, հավասար խոռությամբ, առանց խորդուբորդությունների։ Ակոսներ պատրաստելու համար կուլտիվատորը պետք է աշխատեցնել ամբողջ հողամասի երկարությամբ, ընդ որում օկառիկներից անցնելիս կուլտիվատորի խոփիկները պետք է բարձրացնել:

Ակոսները պատրաստելուց հետո, նրանց գլխամասերը, օկառիկներին միանալու աեղերում պետք է խնամքով ուղղել:



Նկ. 7. Խողովակներ։


Խողովակներով ջրելու համար օգտագործվում են զանազան նյութերից պատրաստած խողովակներ, որոնցից ամենահարմարը երկաթե խողովակներն են։ Բացի երկաթե խողովակներից, հաջողությամբ կարելի է օգտագործել նաև թիթեղից, կավից, եղեգնից, փայտից պատրաստված խողովակներ կամ համապատասխան անցքերով տախտակի կտորներ։

Խողովակների երկարությունը պետք է լինի 30—35 սմ., իսկ տրամագիծը՝ 15—25 մմ., ընդ որում ծանր կավային, թույլ ջրթափանցկությամբ և թեր հողերում անհրաժեշտ է օդտագործել փոքր տրամագիծ (նեղ անցք) ունեցող խողովակներ, որպեսզի ջրի հոսանքը փոքր լինի և դանդաղ հոսանքով լավ ներծծվի հողի մեջ, իսկ համեմատաբար թերեւ, հարթ հողերի համար պետք է վերցնել լայն անցքերով խողովակներ:

Սովորաբար միջակ ծանրության և փոքր թերության հողերի համար օդտագործվում են 20 մմ. տրամագիծ ունեցող խողովակներ:

Խողովակներն ընտրելիս պետք է հետևել որ միևնույն հողամասում օդտագործվելիք բոլոր խողովակները հավասար մեռթյամբ անցքեր ունենան, այլապես հողամասն անհավասար կը ռի:

Օկառիկի թմբի մեջ, յուրաքանչյուր միջարքային ակոսի ծայրին, պետք է դնել մեկ խողովակ: Բոլոր խողովակներն օկառիկի թմբի մեջ անհրաժեշտ է տեղադրել միմյանց հավասար բարձրության վրա այն հաշվառ, որ խողովակի՝ գեպի ակոսն ընկած ծայրը հատակից բարձր լինի մոտ 5 սմ., իսկ գեպի օկառիկը գտնվող ծայրը՝ օկառիկի ջրի մակերեսից 5 սմ. Խորը առիկը գտնվող ծայրը՝ օկառիկի ջրի միջով հավասարաչափ հոսի, լինի, որպեսզի ջուրը խողովակների միջով հավասարաչափ հոսի, ինչպես նաև ջրի երեսին լողացող բուսական մաշցորդները, փայտի կտորները և այլն խողովակի անցքերը չփակեն:



Նկ. 8. Խողովակի տեղադրումը:


Խողովակները հողի մեջ պետք է խնամքով տեղադրել և խոնավ հողով կողքերը լավ ամրացնել (սվաղել):

Ամբողջ դաշտը միաժամանակ ջրելու համար բոլոր ակոսների գլխամասները նախօրոք պետք է ապահոված լինեն խողովակներով:

Խողովակները տեղադրելուց, նրանց դասավորությունը մեկ անգամ էլ ստուգելուց և հայտաբերված թերությունները վե-

բացնելուց հետո ջուրը միաժամանակ պետք է բաց թողնել բու-
լոր օկտափիկների մեջ, որով և սկսում է գաշտի ռոռոգումը:

Ջուրն օկտափիկներից խողովակներով հոսում է միջարքա-
յին ակոսները և հանդարտ առաջ շարժվելով՝ ստիճանաբար
խոնավացնում է հողը:



Նկ. 9. Խողովակների դասավորումը

Խողովակներով ջրելու ժամանակ առանձնապես մեծ աշխա-
տանք չի պահանջվում, որովհետև ջրի հոսանքը գաշտի վրա
կանոնավորվում է խողովակների միջոցով: Միայն անհրաժեշտ է
հետեւ, որ ջուրն օկտափիկների մեջ միշտ անհրաժեշտ բարձրու-
թյան վրա գտնվի և խողովակները ջրով անընդհատ ապահով-
ված լինեն:

Անհրաժեշտ է նկատի ունենալ որ խողովակներից ժամա-
նակի մեկ միավորում հոսող ջրի քանակը մեծ չափով պայմա-
նավորվում է օկտափիկում եղած ջրի բարձրությունից: Եթե օկ-
տափիկում ջուրը բարձր է կանդնած, ապա խողովակների միջով
ջրի հոսանքն ուժիղ է լինում և ըսդհակառակը: Օրինակ, 20 մմ.
տրամագիծի ունեցող խողովակից մեկ վայրկյանում հոսող ջուրը,
խողովակի վրա ջրի շերտի հաստությունը 4 սմ. լինելու դեպ-
քում, հավասար է 0,20 լիտրի, 5 սանտիմետրի դեպքում՝ 0,23
լիտրի, 6 սմ. դեպքում՝ 0,25 լիտրի և այլն:

Սովորաբար բարակ հոսանքով ջրելու ավելի մեծ արդյունք
է տալիս: Այսպես օրինակ՝ միա թենական բամբակագործական

գիտահետազոտական ինստիտուտի 1939 թվի հետազոտություններից պարզվում է հետևյալը*:

Աղ. № 3

Ակոսի երկարությունը (մետրերով)	Զրի հոսանքը (լիտր վայրկանում)	Բամբակի բերքը (հեկտ. շենտներ)	Բերքի հավելումը 0,3 լիտր վայրկան հասանակ դեպքում, համեմատած 0,5 լիտրի հատ (շենտներով).
50	0,5	29,6	—
50	0,3	30,6	1,0
100	0,5	27,1	—
100	0,3	29,8	2,7
150	0,5	32,6	—
150	0,3	37,8	5,2
200	0,5	36,7	—
200	0,3	37,3	1,3

Այս փորձից երևում է, որ բոլոր դեպքերում էլ բարձր բերք է ստացվել այն հողամասերում, որտեղ ջուրը արվել է համեմատաբար փոքր հոսանքով (0,3 լիտր վայրկանում) և որ երկար ակոսների դեպքում բերքն ընդհանրապես ավելի բարձր է եղել:

Զրելու ժամանակ պետք է հետևել, որ խողովակները չփակվեն և ջուրն անխափան հոսի ակոսների մեջ:

Եթե ջուրը հասնում է ակոսի ծայրին և հողը ջրով լավ հաղեցած է և միջակոսացին տարածություններում թմբերը սեղացած, օկտոպիկի ջրի մուտքը պետք է փակել և ջրելը դադարեցնել:

Ծանը և թույլ ջրաթափանցկություն ունեցող հողերում ջուրն ակոսի ծայրը հասնելուց հետո էլ կարիք է լինում որոշ ժամանակ ջրելը շարունակել: Այս դեպքում ակոսների վերջում ստացվող ավելորդ ջուրը պետք է օգտագործել ցածրում գտնվող հոգամասը ջրելու համար:

Տվյալ դաշտը ջրելուց հետո խողովակները պետք է հավաքել և օգտագործել մյուս դաշտերը ջրելու համար: Եթե կոլխոզն առահովված է բավականաչափ խողովակներով, ապա դաշտը ջրելուց հետո խողովակները հավաքելու կարիք չկա, այլ պետք

* Աղյուսակը բերվում է կրճատ ձևով:

է թողնել հաջորդ ջրերի համար, իհարկե տեղահան արված խոզակները նախօրոք ամբացնելուց հետո:

Ջրելու տևողությունը կախված է հողի կազմից և դիրքից: Թույլ թեքություն ունեցող և միջակ ծանրության հողերում ջրելը սովորաբար տեղում է 2—3 օր, իսկ ծանր, թույլ ջրաթափանցիկ հողերում՝ ավելի երկար:

Ակոսա-խողովակային ձևով ջրելու տևողությունը թեպետ բավական երկար է, սակայն աշխատանքի արտադրողականությունը ցածր չէ, որովհետև այս ձևով ջրելու դեպքում հնարավոր է միաժամանակ մեծ տարածության վրա, մինչև 400—500 և ավելի ակոսներով ջուր բաց թողնել:

Փորձերը ցույց են տալիս, որ լավ նախապատրաստված դաշտում փորձված ջրվորը մեկ հերթափոխում կարող է ջրել 1,5—2 հեկտար:

Միշտ պետք է հիշել, որ խողովակներով ջրելու հաջողությունը կախված է դաշտը նախապատրաստելուց: Եթե դաշտի մակերեսը նախօրոք լավ հարթեցված է, օկտոբերիները և միջշարքային ակոսները պատրաստված են կանոնավոր, ապա վըստահ կարելի է լինել, որ խողովակների միջոցով դաշտերը շատ կանոնավոր և հաջողությամբ կջրվեն:

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ԾԵՐԱՏՈՒՄԸ

Բամբակենու բերքատվությունը բարձրացնելու գործում ծերատումը հանդիսանում է կարեւոր ձեռնարկում: Թեպետ այս ձեռնարկումը մեր բամբակագործական շրջաններում շատ վազուց է հայտնի, սակայն այն երբեք մասսայական կիրառում չի ունեցել: Ժամանակին մի շարք հետազոտողներ զբաղվել են բամբակենու ծերատման հարցով, բայց մի ընդհանուր եղբակացության չեն եկել և չեն մշակել նրա կիրառման ճիշտ եղանակը:

Սովորական ականավոր գիտնական Տ. Դ. Լիսենկոն 1935—36 թվերին իր աշխատակիցների հետ կատարած գիտահետազոտական աշխատանքներով ցույց տվեց բամբակենու ծերատման կարեւոր նշանակությունը բերքատվությունը բարձրացնելու գործում և մշակեց այդ աշխատանքի ճիշտ տեխնիկան:

Այժմ բամբակագործ կոլխոզները միանդամայն համոզ-

վել են, որ ակադեմիկ Լիսենկոյի մեթոդով կատարած ծերաւումը շատ օգտավետ ձեռնարկում է: Վերջին 2—3 տարում մեր բամբակագործական կոլխոզներում բամբակենու ծերաւումը մյուս աղբուծեռնարկումների հետ հավասար կիրառվում է, սակայն գեռևս մի շարք կոլխոզներում լրիվ չեն յուրացրել ծերաւման ճիշտ տեխնիկան, որի հետևանքով ծերաւումը հաճախ որոշ սխալներով է կատարվում և այդ պատճառով չի ստացվում այն արդյունքը, ինչ կարելի էր ստանալ ճիշտ կատարվող ծերաւումից:

Ծերաւումից մեծ արդյունք ստանալու համար, նախ պետք է խմանալ թե այդ ձեռնարկումն ինչ նշանակություն ունի և առաջ այն կիրառել ժամանակին ու բարձր որակով:

Որպեսզի լավ պատկերացնենք բամբակենու ծիրաւման առավելությունները, անհրաժեշտ է մոտից ծանոթանալ բամբակենու զարգացման առանձնահատկությունների հետ:

Բամբակենու գլխավոր ցողունի վրա զարգանում են երկու տեսակի ճյուղեր՝ սիմպոդիալ և մոնոպոդիալ: Այդ ճյուղերն իրենց կառուցվածքով և զարգացմամբ իրարից տարբերվում են նրանցից բերք տալիս են միայն սիմպոդիալ ճյուղերը և նրանք կոչվում են բերքատու ճյուղեր, իսկ մոնոպոդիալ ճյուղերի վրա տնմիջականօրեն կնդուղներ չեն զարգանում, այդ պատճառով, նրանք համարվում են ոչ բերքատու ճյուղեր: Սակայն մոնոպոդիալ ճյուղերի վրա ևս զարգանում են սիմպոդիալ ճյուղեր, որոնք նույնական բերք են տալիս, բայց մոնոպոդիալ ճյուղերի վրա զարգացրել սիմպոդիալ ճյուղերը սովորաբար քիչ բերք են տալիս, իսկ երբեմն՝ բոլորովին չեն տալիս:

Սյապիսով բամբակի եփանական բերքն ստացվում է գլխավոր ցաղութիւնի վրա զարգացող սիմպոդիալ ճյուղերից:

Մեզ մոտ մշակվող բամբակի սորտերի վրա (915, 246) սովորաբար լինում են 1—3 մոնոպոդիալ ճյուղեր, որոնք աճում են ցողունի ցածի մասում, իսկ նրանցից անմիջապես վերև, մինչև ցողունի ծայրը, հերթականությամբ առաջ են գալիս սիմ-

պոդիալ ճյուղեր:

Բամբակենու երկու տեսակի ճյուղերն եւ զարգանում են ցողունի տերևածցերում գտնվող բողբոջներից: Յուրաքանչյուր տերևածցում գտնվում են գլխավոր և երկրորդական բողբոջներ,

որոնցից սովորաբար միայն գլխավոր բողբոջն է զարգանում։
Երբեմն զարգանում են նաև երկրորդական բողբոջներ։ Այսպի-
սով բամբակենու ցողունի ամեն մի տերևածոցից մեծ մասամբ
զարգանում է մեկ ճյուղ, իսկ երբեմն երկու, իսկ շատ
քիչ գեղղքերում երեք ճյուղ՝ մեկը գլխավոր, իսկ մնացածները
երկրորդական, որոնք սովորաբար ավելի փոքր են մնում։



Ֆլ. 10. Բամբակենու սիմպոդիալ (ալտղատու) ճյուղը։

Օրգանական նյութերով հարուստ, աղոտով միակողմանիու-
րեն առաստ ոլարարտացված, ստորերկրյա ջրերը մոտիկ հողերում
մշակվող բամբակենու մոնոպոդիալ ճյուղերի քանակը սովորա-

կանից ամելի շատ է լինում: Այդպիսի հողերում հաճախ դարձանում են տերեածոցերի երկրորդական աչքերը, որոնցից մեծ մասամբ մոնոպոդիալ ճյուղեր են ստացվում:



Ակ. 11. Բամբակենու մոնոպոդիալ ճյուղը.

Մոնոպոդիալ ճյուղեր շատ են լինում նաև ժամանակեց շուրջ ծերատված բամբակենիների մոտ:

Բամբակենու վրա մոնոպոդիալ ճյուղերի առկայությունը ցանկալի չէ, որովհետև նրանցից բերք չի ստացվում, իսկ նրանց վրա դարձացող սիմպոդիալ ճյուղերը շատ քիչ բերք են տալիս կամ բոլորավեն չեն տալիս, և իդուր մեծ քանակությամբ մնան դաշտություն են ծախսում: Բացի այդ, մոնոպոդիալ ճյուղերն ու շացնում են բամբակելի հասունացումը և գրանով բերքը պակաս է ստացվում:

Մոնոպոդիալ և սիմպոդիալ ճյուղերն իրարից տարբերվում են հետեւալ արտաքին հատկանիշներով՝

1. Սիմպոդիալ ճյուղերի վրա դարձանում են բամբակի կընդունելի փուղեր, իսկ մոնոպոդիալ ճյուղերի վրա կնդուղներ չեն լինում:
2. Մոնոպոդիալ ճյուղերի վրա, տերեների դիմաց (հակա-

գիր կողմում) ոչ մի օրդան չի լինում, իսկ սիմպոդիալ ճյուղերի վրա, տերեների դիմաց գանվում է կոկոնը (ծաղիկը) կամ կնգուղը:

3. Մոնոպոդյալ ճյուղերի ծայրը վերջանում է տերենով, իսկ սիմպոդիալ ճյուղերի՝ ծայրը՝ կոկոնով, ծաղիկով կամ կնգուղով: Սիմպոդիալ ճյուղերի զարգացման ամենասկզբի շրջանում էլ (երբ գեռևս շատ փոքր են) նըանց ծայրին երեսում է նոր կաղմակերպված փոքրիկ կոկոնը:

4. Մոնոպոդիալ ճյուղերը գլխավոր ցողունի հետ սովորաբար կաղմում են ավելի փոքր անկյուն, քան սիմպոդիալ ճյուղերը:

Մոնոպոդիալ ճյուղերն իրենց ձևով և զարդացմամբ նման են գլխավոր ցողունին:

Սիմպոդիալ ճյուղերի թիվը միջակ զարգացում ունեցող բույսերի մոտ հասնում է միջին հաշվով 18—20-ի: Սակայն մեր զայմաններում բամբակի բերքը փաստորեն հավաքվում է 10—14 սիմպոդիալ ճյուղերից, իսկ մնացած ճյուղերը, որոնք առաջանում են գլխավոր ցողունի վերին մասում, շատ ուշ զարգանալու հետևանքով համբնկնում են աշնան ցրտահարություններին և չեն կարողանում նորմալ հասունացած կնգուղներ տալ:

Նորմալ բերք տվող հիշյալ 10—14 սիմպոդիալ ճյուղերը տալիս են միջին հաշվով մոտ 50—60 կոկոն, իսկ երբեմն էլ ավելի շատ: Սակայն այդ բոլոր կոկոնները մինչև վերջը չեն մնում, նրանց մեծ մասը, մոտ 60—80 տոկոսը ծաղկումից մի քանի օր հետո, որոշ աննպաստ պայմանների հետևանքով, թափվում են և վերջին հաշվով բերք հավաքվում է մոտ 12—15 կնգուղից:

Բամբակի գաշտերի բերքատվությունը բարձրացնելու ամենակարևոր պայմաններից մեկն այն է, որ այդ բերքատու ճյուղերի համար լավագույն պայմաններ ստեղծելով՝ մինիմալ շափերի հասցնել պաղապահման առկոսը, որպեսզի որքան կարելի է շատ կնգուղներից բերք հավաքվի: Այս ինչերը ճիշտ լուծելու համար բերքատու ճյուղերը պետք է լիովին անդադար շրով և սննդանյութերով:

Սակայն, ինչպես հայտնի է, արմատներից բռւյնի մեջ մուտքաբող սննդանյութերը և ջուրը սովորաբար նրա բոլոր մասերի մեջ հավասարաչափ չեն բաշխվում: Դեպի ցողունի ծայրը (աճման կոնը), որը բռւյնի ամենաարագ աճող մասն է, սննդանյու-

թերի և ջրի հոսանքն ավելի մեծ է լինում, քան գեպի պտղատու և ճյուղերը, որի հետևանքով այդ ճյուղերի վրա գտնվող մեծ քանակությամբ պտուղները լրիվ զարգացման անհրաժեշտ պայմաններով չեն ապահովվում: Ահա հիմնականում այն պատճառը, որ բամբակենու վրա զարգացող կնքուղների զգալի մասը դեռ շատ փոքր հասակում թափվում է:

Որպեսզի բույսերի մեջ մոռաք գործող ջուրը և սննդանյութերը գլխավորապես գնան դեպի բերքատու ճյուղերը, ակադեմիկի Լիսենկոն առաջարկեց բերք ավող ճյուղերը կաղմակերպվելուց հետո, բամբակենու գլխավոր ցողունի ծայրը (աճման կոնը) հեռացնել, որի հետագա աճումը միանգամայն ավելորդ է:

Սակայն բամբակենու աճման կոնը հեռացնելուց հետո, սննդանյութերը և ջուրը դեպի բերքատու ճյուղերը գնալուց բացի, նրանց զգալի մասը կծախսվեն նաև մոնոպոլիալ ճյուղերի կողմից, որոնք, ինչպես ասացինք, բերք չեն տալիս, իսկ նրանց վրա զարգացող սիմպոդիալ ճյուղերը մեծ մասամբ աննշան բերք են տալիս: Նկատի ունենալով այդ, ակադեմիկի Լիսենկոն առաջարկեց հեռացնել նաև մոնոպոլիալ ճյուղերը, որպեսզի բոլոր սննդանյութերն ու ջուրն օգտագործվեն միայն ցողունի վրա գտնվող բերքատու ճյուղերի կողմից:

Բամբակենու ծերատման և մոնոպոլիալ ճյուղերը հեռացնելու շնորհիվ արհետականօրեն դադարեցվում է ցողունի ծայրի և մոնոպոլիալ ճյուղերի աճեցողությունը, սննդանյութերի ձիւտ վերաբաշխում է կատարվում, ցողունի վրա գտնվող բերքատու ճյուղերի համար ավելի լավ պայմաններ են ստեղծվում, որի հետևանքով պակասում է պտղավիճումը, ավելանում է կնքուղների քաշը, արագանում է հասունացումը և այս բոլորի հետևանքով զգալիորեն բարձրանում է բամբակենու բերքատվությունը:

Միութենական բամբակագործական գիտահետազոտական ինստիտուտի փորձերի տվյալների համաձայն, ծերատված բամբակենիների յուրաքանչյուր կնքուղի քաշը չծերատվածի կնքուղների համեմատությամբ միջին հաշվով ավելացել է, 1,1 գրամով: Բացի այդ, ծերատված բամբակենիների բերքը 4—11 օրով ավելի բացի այդ, ծերատված բամբակենիների բերքը 4—11 օրով ավելի շուրջ է հասունացել, որը նպաստել է մինչև ցրտահարությունները հավաքվող բերքի բարձրացմանը:

Ակավակի փորձակայանի պայմաններում ծերատումը հեկատումի բերքը 41,5 ցենտներից բարձրացրել է 53,6 ցենտների: Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի (Արմֆան) փորձերի համաձայն, ծերատման շնորհիվ հեկտարից բերքը ավելացել է մինչև 7 ցենտներով:

Ծերատումից նույնանման դրական արդյունք են ստացել վաղարշապատի բամբակագործական կայանը և ուրիշ շատ հետազոտական կայաններ:

Ծերատումը բարձրացնում է ոչ միայն բերքի քանակը, այլև լավացնում է թերի որակը: Ծերատված բամբակենուց ստացվում են համեմատաբար երկար և բարակ թերեր:

Ինչպես ասացինք, ծերատման աշխատանքը բաղկացած է երկու գործողություններով՝ նախ հեռացվում են մոնոպոլիալ ճյուղերը և առաջ ցողունի աճման կոնը:

Որպեսզի մոնոպոլիալ ճյուղերը հեռացվեն, առանց գլխավոր ցողունին վնաս պատճառելու, պետք է զբանք հեռացնել զարգացման հենց սկզբի շրջանում, երբ այդ ճյուղերը դեռ շատ փոքր են, կամ բողբոջային վիճակում են: Մոնոպոլիալ ճյուղերի շուտ հեռացնելը կարեւը է նաև այն տեսակետից, որ զբանք մնալով իզուր սննդանյութեր են ծախսում: Որպեսզի հեռացվեն միայն մոնոպոլիալ ճյուղերը, նախ պետք է կարողանալ նրանց տարբերել բերքատու ճյուղերից և շատ զգուշ միայն, որպեսզի նրանց հետ միասին սիսալմամբ չհեռացվեն նաև բերքատու ճյուղերը:

Երբ բամբակենու առաջին բերքատու ճյուղն այնքան է մեծանում, որ նրա վրա լավ երկում է կոկոնը (մոտավորապես հունիսի 20—25-ը), նրանից ցածր գտնվող բողբոջները կամ ճյուղերը մոնոպոլիալ են լինում, որոնց և հենց այդ շրջանում պետք է հեռացնեն:

Մոնոպոլիալ ճյուղերը հեռացնելու համար ձախ ձեռքով պետք է պահել բույսը և աջ ձեռքի երկու մատով (բութ և ցուցամատով) ցողունի առաջին բերքատու ճյուղից անմիջապես ցածր գտնվող մասն ամուր բռնել և գեղից ցած շփումով հեռացնել աճող ճյուղերն ու բողբոջները տերեների հետ միասին:

Բամբակենու գլխավոր ցողունի ծայրը (աճման կոնը) հեռացնելու համար ձախ ձեռքով պետք է բռնել այն տերերը, որի

ծայրում գտնվում է ամենալիբջին բերքատու ճյուղը, որն այդ ժամանակ դեռ շատ փոքր է լինում և իր վրա կրում է մեկ փոքրիկ կոկոն, իսկ աջ ձեռքի երկու մատով բռնել վերջին բերքատու ճյուղից վերև գտնվող մասը (գլխավոր ցողունի ծայրը) և ամենաբարձրի փոքրիկ տերևի հետ միասին պոկել ու հեռացնել:



Նկ. 12. Մոնղողիակ ճյուղերի
հեռացումը:



Նկ. 13. Բամբակենու ծերատումը:

Ծերատումը պետք է կատարել այսպիս, որ ցողունի կտըը ված տեղը վերջին բերքատու ճյուղի հիմքի հետ հավասար բարձրության վրա լինի:

Միանդամայն անթույլատերի է ցողունի ծայրը խորը կտրել որովհետեւ այդ զեղքում կտըվող ծայրի հետ հեռացվում նաև մեկ-երկու բերքատու ճյուղերը և այդ պատճառով ցողունի վրա նախատեսվածից ավելի քիչ ճյուղեր մնալով, բերքը պահան է ստացվում: Բացի այդ, խորը կտըելու հետևանքով ցողունի վերին մասը պլոկվում է, որը նույնպիս ցանկալի չէ:

Ծերատումը ձիցո ժամանակին կատարելը շատ կարելոր նշանակություն ունի: Ժամանակից շուտ կատարվող ծերատումը բամբակենու կնգուղների քանակը կպակասեցնի, իսկ ուշացած ծերատումից որևէ զբական արդյունք չի կարելի սպասել քանի

ուշ ծերատումից հետո մինչև վեգետացիայի վերջը շատ կարճ ժամանակ է մնում և ամենակարևորը՝ կնքուզների զգալի մասն արդեն թափված է լինում:

Ծերատումը պետք է կատարել մինչև մասուայական պտղավիժման սկիզբը: Մեր պայմաններում բամբակենու մասսայական պտղավիժումն սկսվում է օգոստոսի սկզբներին, հետեւարար ծերատումը մինչև այդ պետք է կատարված, վերջացած լինի: Ծերատման ժամկետը որոշելիս պետք է նկատի ունենալ նաև այն, որ ծերատումից հետո բամբակենու գլխավոր ցողունի աճումը կանգ է առնում և նրա վրա այլև նոր բերքատու ճյուղեր չեն առաջանում, ուստի ծերատումը պիտի կատարել այնպիսի ժամանակ, երբ բամբակենու վրա բավականաչափ պաղատու ճյուղեր կան, որոնք կարող են մինչև սառնամանիքների սկզբելը հասունացած կնքուզներ տալ:

Արմֆանի ուսումնասիրությունները՝ և կոլլոգային մասսայական փորձերը ցույց են տալիս, որ սովետական Հայաստանի պայմաններում ծերատման ամենալավ ժամկետը պետք է համարել հուլիսի 15-ից մինչև օգոստոսի 5-ը, երբ 246 սորտն ունենում է 10—12, իսկ 915 սորտը՝ 11—12 բերքատու ճյուղ:

1941 թվի բամբակի ազդուկանոններավ ծերատման համար նախատեսված են այս նույն ժամկետները, որոնցով խստորեն պետք է ղեկավարվել:

Վերոհիշյալ ժամկետների սահմաններում ծերատումը պետք է սկսել այն դաշտերից, որտեղ բամբակի բույսերն ավելի փարթամ են աճել և նրանց մեծ մասն ունեն անհրաժեշտ չափով բերքատու ճյուղեր: Ծերատման ժամանակ, եթե դաշտի բույսերի մի մասը դեռևս չունի անհրաժեշտ քանակությամբ բերքատու ճյուղեր, այդպիսիների ծերատումը մի քանի օրով պետք է հետաձգել և հետո լրացնեցիչ ծերատում կատարել:

Եթե մոնուպդիալ ճյուղերը որևէ պատճառով ժամանակին չեն հեռացված, ապա գլխավոր ցողունի ծերատման ժամանակ պետք է ծերատել նաև այդ ճյուղերը:

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բամբակի դաշտերում տարածվում են մի շարք վնասատուներ և հիվանդություններ, որոնք ամեն տարի հոկտեմբեռ վնասատուներից ամենից շատ տարածված են՝ բամբակենու տիպը («չոռը»), կարտրինան, ադրոտիսը, կնգուղակերը, վլիճները և մի շարք այլ վնասատուներ, իսկ հիվանդություններից՝ գոմոզը և վիլար:

Բամբակի բերքն այս վնասատուներից և հիվանդություններից պաշտպանելու համար անհրաժեշտ է շատ շուտ ոկտել պայքարի աշխատանքները:

Առաջանոր կոլխոզնիկներն իրենց դաշտերում ամեն տարի կիրառում են մի շարք նախազգուշական միջոցներ, որով կանխում են վնասատուների և հիվանդությունների լայն տարածումը:

Նախազգուշական միջոցների շարքին են պատկանում՝ դաշտերը ժամանակին բամբակի ցողուններից և այլ մնացորդներից մաքրելը, աշնան խոր վարը, աշնան արաթը, դաշտերը և նրանց շրջապատը մոլախոտերից մաքուր պահելը, բամբակի սերմերի ախտահանումը և այլն:


Բացի այդ, բամբակի վեգետացիայի ընթացքում դաշտերում տարածված վնասատուները ոչնչացնելու համար, առաջավոր կոլխոզներում կազմակերպում են՝ սիստեմատիկ և համառ պայքար: Այս բոլորի շնորհիվ բարձր բերք ստացող կոլխոզների դաշտերում վնասատուների քանակն աննշան է լինում:

Հարյուր ցենտներական նըրահիմ նրախմատովն ասում է. «Սովորաբար կոլխոզնիկները վնասատուների դեմ պայքարն սկսում են այն ժամանակ, երբ նրանք տարածվում են դաշտերում և սկսում են ոչնչացնել բույսերը: Այդպիսի պայքարը շատ ավելի քիչ օգուտ է տալիս, քան այն, որը ես կիրառեցի: Ես վնասատուների դեմ պայքարեցի մինչև բամբակենու վրա նրանց երեալը: Այդ պայքարն ոկտել էի դեռ աշնանից»:

Համառոտ ծանոթանանք բամբակի հիմնական վնասատուների և հիվանդությունների հետ:

Բամբակենու տիզը.—Աեր պայմաններում ամենից շատ տարածված և ամենամեծ վնաս պատճառող վնասատուն բամբակենու տիզն է («չոռլ»): Այս վնասատուն նախ տարածվում է բամբակենու տերենների և ատլա ճյուղերի կոկոնների և այլ օրդանների վրա:

Տիզով վարակված բամբակենու տերենների վրա նախ ներս ընկած մասերում (անկյուններում) երեսում են կարմիր բծեր, որոնք աստիճանաբար մեծանալով, ընդգրկում են ամբողջ տերեզը: Վարակված տերենի հակառակ կողմի վրա (երեսի կողմից երեսցող կարմիր բծի անմիջապես տակը) կարելի է տեսնել ստայնի բարակ շերտով պատճած տեղեր: Հասարակ աչքով կամ ավելի լավ է, խոշորացուցի օգնությամբ կարելի է նկատել արագ շարժվող, շատ մանր, դեղնավուն տիզեր:



Նկ. 14. Տիզով վարակված բամբակենու տերեն:

Վարակված տերևները հետզհետե չորանում և թափվում են

Տիղերը բազմանում են ձվիկների միջոցով: Ամեն մի էդ տիպ ածում է մոտ 80—100 ձռւ: Ամառվա շող օրերին ձվիկների զարգացումը տևում է 8—10 օր: Այդ ձվիկներից դուրս եկող տիղերը որոշ ժամանակից հետո նույնական ածում են ձվեր, որոնցից գարձյալ տիղեր են ստացվում և այսպիսով ամեն մի տիղ տարվա ընթացքում բազմաթիվ սերունդներ է տալիս (16—18 սերունդ):

Այսպիսի արագ բազմացումից կարճ ժամանակամիջոցում ստացվում են հոկայական քանակությամբ տիղեր, որոնց դեմ ժամանակին կանոնավոր պայքարը չկազմակերպելու դեպքում, նրանց հասցրած վասը շատ մեծ չափերի է հասնում: Հաճախ նրանք բամբակի թփերից թողնում են միայն ցողունները և ճյուղերը:

Տիղերը ձմեռում են դաշտում աճող մոլախոտերի վրա, հողի կողատերի տակ, ճեղքերի մեջ, բռնական մնացորդների վրա և այլն:

Այս վասատուների գեմ հաջող պայքարելու համար նախ պետք է ոչնչացնել բամբակի դաշտում և նրա շրջապատում զարգացող մոլախոտերը, վերացնել միջնակները և ժամանակին կիրառել բոլոր ազրոձեռնարկումները:

Բամբակի մասսայական ծլումից անմիջապես հետո անհրաժեշտ է սիստեմատիկ հետեւ և ժամանակին վարակված բույսերը հայտաբերելով, անմիջապես կազմակերպել պայքար:

Բամբակի տիղերը ոչնչացնելու համար գործածվում է պոլիսուլֆիդի 0,5 աստիճանի լուծույթ կամ ծծումբ: Ծծումբը գործածվում է նախապես հանդած կրավոշու հետ խառնելուց հետո:

Դաշտը շատ թեթև վարակված լինելու դեպքում պայքարը պետք է կենտրոնացնել վարակված օջախներում, միաժամանակ արակելով կամ փոշուելով վարակված տեղերի շրջապատը) տուրակելով կամ փոշուելով վարակված տեղերի շրջապատը)



Նկ. 15. Բամբակենու տիղը:

նվազն 10 մետր տարածության վրաւ Այն դեպքում, երբ տիպերը տարածվել են գաշտի մեծ մասի վրա կամ վարակված օջախների թիվը համեմատաբար մեծ է, պետք է ամբողջ գաշտը խնամքով սրակել կամ փոշոտել:

Այս աշխատանքը վեգետացիայի ընթացքում անհրաժեշտ է մի քանի անգամ կրկնել, որպեսզի գաշտը միշտ ազատ լինի վարակումից: Միաժամանակ պետք է սրակել նաև մոլախոտերը, որոնց սրակումից հետո, անհրաժեշտ է քաղիանել և դաշտից դուրս հանելով ոչնչացնել: Մոլախոտերի սրկումն ավելի հաղա-տակահարմար է սկսել շատ շուտ, ընդ որում առաջին սրակումը կատարել վաղ գարնանը, իսկ երկրորդը՝ 10—15 օր հետո, բամ-րակի ծլման շրջանում: Այս սրակումները կաղմակերպել հատ-կապես գաշտերի եղերքներում, միջնակներում, ճանապարհների եղերքներում, առուների շուրջը և այլն:

Կարաղրինա.—Այս վասատումն որոշ տարիներ շատ ուժեղ է տարածվում և ինչպես մի շարք բույսերի, այնպես էլ բամբա-կենուն հասցնում է շատ մեծ վնաս: Վնաս պատճառողը հանդի-սանում է կարաղրինա կոչվող թիթեռի թրթուրը:

Յուրաքանչյուր թիթեռ ածում է մոտ 500 ձու: Զվիկներից դուրս են գալիք շատ փոքրիկ թրթուրներ, որոնք սնվում են բույսերի թարմ մասերով:

Կարաղրինայի թրթուրը կրծում և ոչնչացնում է բամբա-կենու տերեները, բողբոջները, կոկոնները, ծաղիկները և այլ մասերը, սակայն գլխավոր վնասը հասցնում է բույսի տերե-ներին:

Թրթուրները մոտ 3 շաբաթ ապրելուց հետո, հողի մեջ, կոշտերի տակ և այլ հարմար տեղերում հարսնյակավորվում են:

Հարսնյակներից դուրս են գալիք փոքրիկ թիթեռներ: Մեկ սեղոնում, գարնանից մինչև աշուն, կարաղրինան տալիս է մոտ 5—6 սերունդ:

Զվիկներից նոր դուրս եկած թրթուրները փոքր են լինում (հազիվ 1—2 մմ. երկարություն են ունենում), իսկ հետագայում արագ մեծանալով դառնում են մոտ 3 սմ: Կարաղրինայի թըր-թուրների գույնը սովորաբար կանաչ է, երկու կողքերից, ամ-բողջ մարմնի երկարությամբ ունի մուգ գույնի լայն շերտեր, իսկ մեջքի վրա՝ սպիտակավուն բարակ գծեր: Երբեմն պատա-

հում են նաև այլ գույնի թրթուրներ (բաց վարդագույն, շագանակագույն կամ համարյա սև):

Թրթուրները որևէ վտանգ զգալիս, ոլորվում են և բռւյսի վրայից իրենց ցած զցում և աշխատում են հողի մեջ թագնվել: Օրվա շոգ ժամերին թրթուրների մեծ մասը բռւյսերից իջնում են ցած և թագնվում են հողի մեջ, կոշտերի տակ:

Ինչպես միշտ, այս գեղքում ևս հաջող պայքարի առաջին պայմանը՝ մոլախոտերի ոչնչացումն է, որովհետև կարաղը հայի առաջին սերունդը մեծ մասամբ բազմանում է մոլախոտերի վրա և հետո անցնում է կուլտուրական բռւյսերի վրա:

Հողի սիստեմատիկ փերեցումը և գաշտերը ջրելք նույնպես օգնում են հողի մեջ գտնվող հարսնյակների, ինչպես նաև թրթուրների ոչնչացմանը: Մեծ չափերով օգնում է նաև թրթուրները ձեռքով հավաքելը և ոչնչացնելը:

Քիմիական նյութերից օգտագործվում է կալցիումի արսենատի 0,5 տոկոսանի լուծույթը (մեկ գույլ 12 լիտր ջրին 60 գրամ կալցիում արսենատ):

Լավ արդյունք է տալիս նաև քուսպի և նատրիումի արսենիալից պատրաստված գրալչանյութը (մեկ հեկտարի համար 40 կիլոգրամ քուսպի ալյուրին խառնել 800 գրամ նատրիումի արսենատ):

Կարաղը հայի տարածումն արգելելու համար վարակված վայրերի կամ դաշտերի շուրջն անհրաժեշտ է փորել արգելվիչ առուներ: Առուները պետք է փորել ուղղիղ պատերով՝ 35—40 սմ. խորությամբ և 25—30 սմ. լայնությամբ և մեջը շաղ տալ դըրովչանյութ:

Ազրատիա.—Այս վնասատուի թրթուրները ձմեռում են հողի մեջ: Գարնանը, եղանակները տաքանալուց հետո, թրթուրները դուրս են դալիս և սկսում են սնվել մոլախոտերով կամ կուլտուրական բռւյսերով: Որոշ ժամանակից հետո թրթուրները հողի մեջ հարսնյակավորվում են: 15—18 օր հետո հարսնյակներից դուրս են գալիս թիթեռներ:

Թիթեռները ցերեկները թագնվում են հողի կոշտերի կամ բռւյսերի տակ, իսկ զիշերները թռչում են: Թիթեռները մեծ քանակությամբ ձվիկներ են ածում: Ձվիկներից 5—6 օր հետո դուրս են գալիս թրթուրներ, որոնք սկզբի շրջանում ապրում են

բույսերի վրա, իսկ հետո, ցերեկները թագնվում են հողի մեջ, իսկ զիշերները դուրս գալով սնվում են բույսերով, հատկապես բամբակենու ծիլեռով։ Այս թրթուրը մեծ մասամբ կարում է բամբակի ծիլերի արմատավզիկներն ու տերևները։




Նկ. 16. Ագրոտիսի թրթուրը

Ագրոտիսի թրթուրի մարմինը վերևի մասում լինում է մուգ-մոխրագույն և փայլուն, իսկ փոքրի տակ ավելի բաց գույնի։ Վնասված բույսերի մոտ հողը թեթևակի փորփոքելով կարելի է զանել թագնված թրթուր։

Ագրոտիսով վարակված դաշտերում նախքան ցանքը շաղ է տրվում թունավոր գրավչանյութ (մեկ հեկտարի համար գործածվում է 60 կիլոգրամ քուսպի ալյուր և 2 կիլոգրամ նատրիումի արսենատ)։ Նույն ձևով պայքար կարելի է կազմակերպել նաև ցանքից հետո, եթե բույսերի վրա նկատվում են վնասվածքներ։

Ագրոտիսով ուժեղ վարակված դաշտերում, եթե վնասատուն սկսում է բույսի տերևներն ուտել, անհրաժեշտ է դաշտը սրբակել կալցիում արսենատի 0,5 տոկոսանի լուծույթով։ Թիմիական պայքարի հետ միաժամանակ պետք է նաև ձեռքով հավաքել թրթուրները և ոչնչացնել։ Ագրոտիսով ուժեղ վարակված հողա-



Նկ. 17. Ագրոտիսի թրթուրը բամբակի ծիլի արմատավզիկները վնասելիս

մասերի շուրջը անհրաժեշտ է փորել արգելիք առուներ, որոնց
մեջ շաղ տալ գրավչանյութ։ Առուները դրով լցված լինելու
դեպքում գրավչանյութ չպետք է շաղ տալ:

Կնգուղակեր.—Բամբակենու այս ֆլամատուն զարգանում
և բաղմանում է նույն ձևով, ինչպես նախորդը, այսինքն՝ թի-
թեռի ածած ձվիկներից դուրս են դալիս թրթուրներ, որոնք
սնվում են բամբակենու կոկոններով, ծաղիկներով և կնգուղնե-
րով։ Այս թրթուրները մտնելով բամբակի
կնգուղների մեջ՝ սնվում են սերմերով։

Կնգուղակերի գեմ պայքար կազմակերպ-
վում է քլահական նյութերով և թրթուր-
ները ձեռքով հավաքելով։ Քիմիական նյու-
թերից օգտագործվում է կալցիում արսե-
նատ և թունավոր գրավչանյութ։ Քիմիա-
կան պայքարը պետք է սկսել շուտ, այն
ժամանակ, երբ թրթուրները դեռ չեն մտել
կնգուղների մեջ, հակառակ դեպքում՝ թույ-
ներն աղղեցություն չեն ունենաւ։

Լվիճներ.—Բամբակի գաշտելում լվիճ-
ները տարածվում են բույսերի զարգացման
հենց սկզբի շրջանից և չափազանց արագ
բազմանալով՝ մեծ ֆլանեներ են պատճառում։

Լվիճները ծծում են բամբակենու տերեների հյութը, որից
տերեները կուչ են դալիս, կտրատվում և շատ անորմալ են
զարդանում։

Հաճախ լվիճները կուտակվում են բույսերի աճման կո-
ների վրա և ոչնչացնում են նոր զարգացող տերեները։ Այս ֆլա-
սատուով վարակված դաշտերում բամբակի բույսերը շատ վատ
են զարգանում, նույնիսկ որոշ շրջանում բույսերի աճը բոլորու-
վին կանգ է տունում։

Ամառվա շող շրջանում լվիճների քանակը պակասում է,
իսկ աշնան կողմը նբանք դարձյալ ուժեղ տարածվում են։ Լվիճ-
ներն արտադրում են «շիրա» կոչվող քաղցր հեղուկ, որը քալի-
լով բամբակի կնգուղներին՝ գցում է բերքի որակը։ Հաճախ այդ
շիրայի վրա զարգանում են որոշ սնկեր, որոնք էլ ամելի վա-
տացնում են բամբակի բերքի որակը։



Նկ. 18. Կնգուղակեր
թրթուրը

Ալիքների գեմ պայքարը պետք է սկսել շատ վաղ: Մայիս
ամսից սկսած դաշտերը պետք է սխտեմատիկ հետազոտել և
ըլիքներ երկարուն պես՝ որսկումն սկսել:

Այս վնասատուի դեմ գործածվում է նիկոտին սուլֆատի
կոմ անաբաղին սուլֆատի 0,1 տոկոսնի և օճառի 0,4 տոկո-
սանի լուծույթ (մէկ գույլ ջրին 12 գրամ նիկոտին սուլֆատ և
48 գրամ օճառ):

Բուժումը պետք է կրկնել մի քանի անգամ, մինչև դաշտն
աղատիլի այս վնասատուից:

Գօնող.—Ինչպես ասել ենք, բամբակինուն մեծ վնասներ
պատճառող հիվանդությունների շարքում գոմողը կարեոր տեղ
է գրավում: Այս հիվանդության պատճառը հանդիսանում են
բակտերիաները: Գոմոզով նախ վարակվում են բամբակի ծիկերը,
որտեղից հետագայում վարակը տարածվում է բույսի մյուս օր-
գանների վրա (տերևների, ցողունների, կողուղների): Բամբա-
կենու շաքելների վրա հիվանդությունը նկատվում է մուղկա-
նաչ, ճարպային կլոր բծերով: Ցերենների վրա այդ բծերն ան-
կյունավոր են լինում և մեծ մասամբ գտնվում են զլխավոր ջի-
ղերի միջուարածություններում,

Ցողունների վրա ես գոմոզը երևան է գալիս ճարպային
բծերով, որտեղից ցողունը բարակում է և հաճախ այդ տեղից
էլ ցողունը ծովում կամ կոտրվում է: Մաղկակիցների վրա ճարպա-
յին բծերը ավելի երկարավուն են լինում, իսկ կողուղների
վրա մեծ մասամբ կլորավուն:

Բույսի գոմոզով վարակված մասերն աստիճանաբար գորշ
գույն են ստանում և հետո չորանում են: Վարակված կողուղ-
ները շատ աննորմալ են զարգանում և նրանցից ստացվում է
չափազանց վատորակ բերք:

Գոմոզի դեմ պայքարելու համար սերմացուն պետք է ախ-
տահանել փորմալինով:

Փորձերը ցույց են տալիս, որ ախտահանված սերմերով
կատարված ցանքերում վարակված բույսեր շատ քիչ են լինում:
Անայն միայն սերմերը ախտահանելով գոմոզից ամբողջովին
աղատվել հասրավոր չէ: Դաշտում մի քանի վարակված բույս
բավական է, որ կարճ ժամանակամիջոցում զգալի տարածության
վրա բույսերը վարակվեն: Ուստի անհրաժեշտ է, որ բամբակի

յանքերի հետագումները կատարվեն՝ առանց ուշացումների և այդ աշխատանքների ժամանակ առաջին հերթին հեռացվեն գումողով վարակված բույսերը: Հեռացված բույսերը դաշտից անմիջապես պետք է դուրս հանել և ցանքիրից հեռու հողի մեջ թաղել առնվազն 20 սմ. խորությամբ:

Բացի այս միջոցներից, աշնանը, բերքահավաքից անմիջապես հետո, անհրաժեշտ է հավաքել բամբակենու ցողունները արմատների հետ միասին, բուսական մնացորդները և դաշտից դուրս հանել:

Վիլտ.—Այս հիվանդությունը կոչվում է նաև բամբակենու թառամում: Հիվանդության պատճառը որոշ մնկեր են, որոնք հողից արմատների միջոցով բույսի մեջ են մտնում և վասում են սննդաբար անոթների սիստեմը: Վիլտով վարակվում են նաև մի շարք այլ բույսեր (կարտոֆիլ, արևածաղիկ, խորդենի, տումատ) և մոլախոտեր:

Հիվանդությունը բամբակի բույսերի վրա սովորաբար երեք գումար է կոկոնակարման շրջանում: Վարտկված բամբակենու տեսքի վրա նկատվում են զեղնած մասեր (բծեր), որոնք գնալով մհծանում և ծածկում են ամբողջ տերերը: Հիվանդացած տերեները թառամած տեսք են ստանում, հաճախ ոլորվում են և աստիճանաբար չորանալով թափվում: Վիլտով ուժեղ վարակված բույսերը բոլորովին զրկվում են տերեներից և կնքուներն անորմալ զարգանալով՝ տալիս են քիչ և անվորակ բերք:

Վիլտով վարակված բամբակենու ցողունի միջուկը դորշ գույն է ստանում, որը պարզ կարելի նկատել ցողունի հատած տեղում:

Այս հիվանդության գեմ պայքարելու համար բամբակի բերքահավաքից անմիջապես հետո պետք է հավաքել բույսերի ցողուններն արմատների հետ միասին, բույսերի այլ մնացորդները և դաշտից դուրս հանել, որոնք դաշտում մնալու դեպքում պատճառ կդառնան հաջորդ տարին վիլտի ավելի ուժեղ տարածմանը:

Վարակված դաշտերը պարաբռացնելիս գոմազը պետք է տալ լավ քայլքայլած վիճակում, առանց ծղոտի և այլ բուսական մնացորդների:

Վիլտով վարակված դաշտերում որոշ ժամանակ չպետք է

ցանել բամբակ և վիլտով վարակվող այլ կուլտուրաներ: Վիլտի դեմ պայքարելու լավագույն միջոցը՝ կանոնավոր ցանքաշրջանառությունն է:

ԲԵՐՔԱՀԱՎԱՔ

Բամբակենու կնդուզները զարգանում և հասունանում են առտիճանաբար: Կնդուզները բացվում են բույսի ցածից սկսած դեպի վերև և գլխավոր ցողունից դեպի ճյուղերի ծայրը: Նորմալ զարգացման պայմաններում, սովորաբար, յուրաքանչյուր բույսի վրա ներքեցից գեղի վերև (մեկ սիմպոդիալ ճյուղից մյուսը) յուրաքանչյուր 3—4 օրում մեկ կնդուզ է բացվում, իսկ ամեն մի ճյուղի վրա մեկ կնդուզից մինչև մյուս կնդուզի բացվելը միջին հաշվով տեսում է մոտ 6—7 օր:

Բամբակի հասունացման սկիզբը և կնդուզների բացման տեմպը մեծ չափով կախված է սորտի առանձնահատկություններից և մշակության պայմաններից: Կարեռն այն է, որ վեգետացիայի ընթացքում լրիվ և ժամանակին կիրառվի աղբոնձնարկումների կոմպլեքսը, առանց աչքաթող անելու որևէ ձեռնարկում: Բարձր բերքի վարպետ ֆայզուլլա Յունուսովն այդ մասին ասում է. «Մի շաբաթ բրիգադիրներ և օղակավարներ թույլ են տալիս շատ մեծ սխալ, աշխատանքները բաժանելով կարեվորի և ոչ կարեռի: Մեկն ավելի կարեռ է համարում վարը, մյուսը՝ ցանքը, երրորդը՝ փխրեցումը, իսկ չորրորդը՝ ջրելը: Եվ դրան համաձայն էլ ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում են որևէ մեկ աշխատանքի վրա: Ուղես օրենք, նրանց միշտ սովորում է անհաջողություն: Իսկ ես իմ պրակտիկայից գիտեմ, որ ոչ կարեռ աշխատանք չկա: Բոլոր աշխատանքները հավասարապես կարեռ են և բարձր բերք ստանալու համար լիարժեք: Ինչքան էլ ամառային մշակությունը լավ կատարվի, եթե վարն անորակ է կատարված, բերքը միշտ ավելի պակաս կլինի, քան կարելի էր ստանալ ինչքան ուզում ես բամբակը ջրիր, եթե նա չի ստացել իր համար անհրաժեշտ պարարտանյութը, ուալ բերք չի տա:

Բոլոր աշխատանքները կարեռ են—այս ես դրի իմ օղակի աշխատանքների հիմքում:

իմ հողամասում ես կիրառեցի այն, ինչ ագրոնոմներն անվանում են ագրոծենարկութիւնների կոմպլեքս»:

Ահա այս սկզբունքով կատարվող աշխատանքն ապահովում է ժամանակին հասունացող, առատ և բարձրորակ բերք: Այդպիսի պայմաններում բամբակենու բույսերի վրա ավելի շատ և ավելի մեծ կնպուղներ են զարգանում, որոնց մեծ մասը կամ բոլորը հասունանում են մինչև ցրտահարությունների սկսվելը:

Բամբակի բերքը ժամանակին և առանց կորուստի հավաքելու համար պետք է նախապատրաստված դիմավորել բամբակենու հասունացումը:

Առաջավոր կոլխոզներն իրենց դաշտերի առատ բերքն առանց ձգձգութիւնների և բարձր որակով հավաքելու, բերքը դաշտից անխափան կերպով փոխադրելու և ժամանակին գնման կայան հանձնելու համար մի շարք նակապատրաստական աշխատանքներ են կատարում: Նորոգում են ճանապարհները, կամուրջները, փոխադրական միջոցները, պատրաստում են պարկերը, բերք հավաքողների հատուկ գոգնոցները և այլն: Միաժամանակ որոշում են յուրաքանչյուր օղակի և բրիգադայի դաշտերի բերքատվությունը և ըստ այնմ էլ կազմում են ամսվա ու հնգօրյա պլանները: Օղակի անդամների մեջ աշխատանքների բաշխում են կատարում և ինչպես առանձին կոլխոզնիկների, այդպիս էլ օղակների և բրիգադաների միջև լայնորեն ծավալում են սոցիալիստական մրցումն ու հարվածայնությունը:

Բամբակագործ ստախանովականները բերքահավաքի ասպարեզում ևս ձեռք են բերել շատ մեծ նվաճութիւններ: Նրանք բերքահավաքի տեխնիկայի մեջ մտցրել են մի շարք նոր ձեռք, որոնց շնորհիվ գերազանց արդյունքների են հասել: Այժմ շատ կոլխոզնիկներ օրական հավաքում են 400—500 կիլոգրամ և ավելի բերք, իսկ 100—200 կիլոգրամ հավաքողների կարելի է հանդիպել շատ կոլխոզներում:

Սովորաբար բամբակենու կնպուղներից բերքը հավաքում են մեկ ձեռքով, իսկ ստախանովական բամբակագործները ցույց տվին, որ այդ աշխատանքը կարելի է կատարել երկու ձեռքով և դրանով իսկ մեծ չափով բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը:

Բամբակի բերքահավաքի պրոցեսը կազմված է մի քանի

առանձին գործողություններից, ինչպիսիք են՝ կնդուզներից բամբակ հանելը, հավաքված բերքը գոգնոցի մեջ լցնելը, բերքը հավաքելու ընթացքում դաշտում առաջ շարժիկելու և գոգնոցից բերքը դատարկելը: Այս աշխատանքների ճիշտ և արտդ կատարում են է կախված մեկ միավոր ժամանակամիջոցում հավաքվող բերքի քանակը: Հենց այս խնդրի վրա ստախանութիւնան կոլլոզ- սիկները հատուկ ուշադրություն են դարձրել և հիշյալ գործողությունները կատարելադրծելու, փոխադարձ կապահցվածությամբ կիրառելու, ինչպես նաև միաժամանակ երկու ձեռքով աշխա- տելու միջոցավ նրանք շատ մեծ նվաճումների են հասեր:

Ինչպես առաջավորների վորձն է ցույց տալիս, կնդուզների միջից բամբակ հանելու համար նախ պետք է մատներով բամ- բակը խորքից բռնել և արագ դուրս հանել: Այսուհետեւ, յուրա- քանչյուր կնդուզից հանած բամբակը չպետք է առանձին- առանձին դնել գոգնոցի մեջ, ինչպես սովորաբար կատարում են, այլ պետք է ձեռքերի մեջ հավաքնել մի քանի կնդուզի բերք (որ- քան հնարավոր է ձեռքում պահել) և ապա աջ ձեռքի հավաքածը միացնել ձախ ձեռքում հավաքածին ու ձախ ձեռքով լցնել գոգ- նոցի մեջ: Այս ձեռվ զգալիորեն կրծատվում են ավելորդ շար- ժումները և աշխատանքի արտադրողականությունը բարձրա- նում է:

Շատ կարեոր է նաև յուրաքանչյուր բերք հավաքողին նախօրոք որոշ տարածություն արամաղրելը: Հաճախ բրիգա- դայի կամ օղակի բոլոր անդամները բերքի հավաքը կատարում են միասին՝ մի տեղում կուտակված: Նման գեղքերում յուրա- քանչյուր հավաքող մի շարքում բամբակը հավաքելուց հետո ստիպված է լինում փնտուել նոր շարք և ավելորդ երթեկելու- թյուններ կատարել որի հետևանքով անտեղի մեծ ժամանակ է կորցնում: Առաջավոր կոլլոզներում այս խնդիրը շատ ճիշտ կերպով է լուծվում: Դաշտում ավելորդ երթեկելությունները կրծատելու և դիմազրկություններ տեղի չընենալու համար, յուրաքանչյուր բերք հավաքող կոլլոզների արամաղրում են որոշ տարածություն կամ որոշ թվով շարքեր, որտեղ նա ամբողջ օրվա ընթացքում առանց ավելորդ ժամանակ կորցնելու և որոշ սիստեմով հավաքով է բերքը:

Այժմ շատ կոլլոզներում բերքը դաշտից դուրս տանելու

և չորսացնելու համար դաշտային կայանում փռելու կամ պար-
կերի մեջ լցնելու համար նշանակում են հատուկ աշխատողներ,
որի շնորհիվ մասնագիտացած բերք հավաքողներն այդ աշխա-
տանքների վրա ժամանակ չեն կորցնում:

Համագումար բերքը դաշտից փոխադրողը զնում է իր օղակի
բերք հավաքողների մոտ և բամբակով լցված պարկերը տանում
հանձնում է բրիգադի բերքն ընդունողին, որին օգնում է իր
բերած բերքը կշռելու և նրանից համապատասխան տեղեկանք
(կտրոն) ստանալով հանձնում է բերքը հավաքողին: Հետագա-
յում այդ կտրոններով ստուգում է յուրաքանչյուր բերք հա-
վաքողի հավաքած բերքի քանակը:

Նախքան բամբակի բերքահավաքը, դաշտերը պետք է մաք-
րել մոլախոտերից, հատկապես կտչուկից, որը թե խանգարում
է բերքահավաքի աշխատանքները և թե խիստ գցում է բերքի
որակը: Բերքահավաքը պետք է սկսել տուածին կնդուղները մաս-
սայականութեան բացվելու ժամանակ և այնուհետեւ հաջորդ կըն-
գուղները բացվելու հետ դուզբնթաց կազմակերպել բերքի սիս-
տեմատիկ հավաք:

Բերքահավաքը չպետք է ուշացնել, այլապես հասած բամ-
բակը դաշտում երկար մնալով՝ անձրեներից, փոշուց և քամինե-
րից կարող է փչանար ինչպես նաև կարող է թափվել և կեղ-
տուգիր:

Բերքը պետք է հավաքել հասունացած, լավ բացված կըն-
գուղներից, միշտ աշխատելով, որ մինչեւ ցրտահարությունները
հավաքած բերքը գերազանցապես ընտիր սորտի լինի: Կնդուղ-
ների միջից բերքը հանելիս պետք է հետեւ, որ նրանց մեջ
բամբակի փաթիլներ չմնան: Առանձին պետք է հավաքել հու-
մույթի տարրեր սորտերը, ինչպես նաև երրեք չի կարելի իրար
իսառնել բուսաբանական տարրեր սորտերի բերքը: Բերքահա-
վաքի ժամանակ պետք է ուշադիր լինել որ չորսցած տերենների,
ծաղկակիցների մասցորդները չխառնվեն բերքին: Նաև նորմալ
բերքի հետ չպետք է խառնել, այլ առանձին պիտի հավաքել
հիվանդ բույսերի, մասաված, աննորմալ բացված կնդուղների
բերքը և գույնը փոխած, դեղնած բամբակը:

Առնավ եղանակներին հավաքված բամբակը պետք է բա-

բակ շերտով փուել, լավ չորացնել և ապա լցնել պարկերը (բարդանները):

Դաշտից բամբակն ընդունելու, չորացնելու և պարկերը լցնելու համար յուրաքանչյուր բրիգադա պետք է ունենա նախօրոք պատրաստված հատուկ տեղ (կայան), որը պետք է պատրաստված լինի դաշտերի սահմաններում կամ այլ կուլտուրաներից ազատված դաշտերում և ապահովված լինի հակածըները անհրաժեշտ սարքավորումով: Այդ կայանները երբեք չի կարելի պատրաստել բամբակով դրադված դաշտերում:

Մինչև ցրտահարությունները հավաքվող բամբակը միշտ ավելի բարձր որակի է լինում, քան ցրտահարություններից հետո հավաքածը, այդ իսկ պատճառով այդ բամբակը պետք է առանձին հավաքել և իրար չխառնել:

Բամբակի վեգետացիան կանդնեցնող ցրտահարություններից 10—15 օր հետո, ինչպես այս գրքույկի սկզբում ասել ենք, պետք է հավաքել բոլոր խակ, չքացված կնդուղները և նրանց չորացնել ու բամբակն առանձնացնել:

Խակ կնդուղները հավաքելու համար կարելի է օգտագործել այդ նպատակի համար գոյություն ունեցող հատուկ մեքենաները (սլեդինգներ):

Բամբակի դաշտերի աշխատանքներն ավարտված են համարվում, եթե բերքը լրիվ հավաքված, դաշտը բույսերի մնացորդներից մաքրված և աշնանավարը կատարված է:

Միշտ պետք է հիշել, որ բամբակի դաշտերի բարձր բերքն անկորուստ և բարձր որակով կարելի է հավաքել աշխատանքները ձիշտ կազմակերպելով և լայնորեն կիրառելով առաջավոր բամբակագործների նվաճումները:



Պատ. խմբագիր՝

Պ. Ն. Հակոբյան

Վ. 7024 Պատվեր 517. Տիրաժ 1500. Տպագր. 4½ մամ. Մեկ մամ. 3820 հշ.
Հեղ. 3,75 մամ. Ստորագրված է տպագրության համար 23/VII 1941 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի 65

ԲՈՎԱՆԴԻՍ. ԽՈՒԹՅՈՒՆ

Էջ

Առաջաբան	3
Բամբակի դաշտերի նախացանքային մշակությունը	6
Նախացանքային ջուր (արաթ)	14
Պարաբուզում	16
Ցանք	20
Ցանքի խտությունը և նորացումը	22
Կուլտիվացիա և քաղնան	27
Խաչաձև մշակություն	29
Գաշտերի ոսողումը	39
Ակրոս-խողովակային ջրում	41
Բամբակենու ծերատումը	50
Բամբակենու վասատուները և հիմանդրությունները	59
Բնութանագար	61

ԹՐԱՎ. ԱՆԴՐԱ. ԽՈԽԹՑՈՒՅՆ

	Էջ
Ասաջարան	3
Բամբակի դաշտերի նախացանքային մշակությունը	6
Նախացանքային ջուր (արաթ)	14
Պարաբուացում	16
Ճանք	20
Ճանքի խտությունը և նոսրացումը	22
Կուլտիվացիա և քաղնան	27
Խաչաձև մշակություն	29
Դաշտերի ռողդումը	39
Ակոսա-խողովակային ջրում	41
Բամբակենու ծերատումը	50
Բամբակենու վասատուները և հիվանդությունները	59
Բերքանվարք	60

ԳԻԱԸ 1 Ր. 75 Կ.

571

A 71
18371

Որա,

ДОЦЕНТ С. КАРАГЕЗЯН
Передовая агротехника культуры хлопчатника
(на армянском языке)
Азмиз, Ереван, 1941 г.